

**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ՄՈՆԻՏՈՐԻՆԳ-2011**



ԵՐԵՎԱՆ-2011

Հեղինակներ՝

Լ.Ս. Դոյրոյան
Գ. Ղ. Հայրապետյան

«Տեղեկատվության ազատությունը ՀՀ-ում» մոնիտորինգը պատրաստվել և հրատարակվել է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի կողմից իրականացվող «Տեղեկատվության ազատության կիրառումը ՀՀ-ում» ծրագրի շրջանակներում՝ ԵԱՀԿ Երևանի գրասենյակի և ԱՄՆ ՄԶԳ համաֆինանսավորմամբ:

Այստեղ արտահայտված տեսակետները հեղինակային են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԵԱՀԿ Երևանի գրասենյակի և ԱՄՆ ՄԶԳ տեսակետները:



Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն Երևանյան գրասենյակ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
Մոնիտորինգի նպատակը և խնդիրները.....	5
Մոնիտորինգի մեթոդաբանությունը.....	6
ԳԼՈՒԽ Ա. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ	
Ա.1 Միջազգային պարտավորություններ.....	8
Ա.2 ՀՀ Սահմանադրությունը.....	10
Ա.3 Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք և ՀՀ Քրեական օրենսգիրք.....	11
Ա.4 «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք.....	12
ԳԼՈՒԽ Բ. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ. ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	
Բ.1 Արդյունքների ընդհանուր պատկերը.....	13
Բ.2 Արդյունքներն ըստ պատասխանների տեսակների.....	14
Բ.3 Արդյունքներն ըստ պատասխանների ժամկետների.....	18
Բ.4 Արդյունքներն ըստ տեղեկություն տնօրինողների.....	20
Բ.5 Արդյունքներն ըստ դիմողների.....	25
Բ.6 Արդյունքներն ըստ տեղեկություն ստանալու հարցման ձևերի և տեսակների.....	27
ԵԶՐԱՅԱՆԳՈՒՄՆԵՐ	31
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	34
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	38

Ներածություն

Տեղեկատվության ազատությունն այսօր դիտվում է որպես քաղաքացիական հասարակությունում մարդու իրավունքների պաշտպանության հիմնական երաշխիքներից մեկը: Իրազեկ և ակտիվ քաղաքացիական հասարակության ձևավորման, իշխանության գործունեության վերահսկողության, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարի լավագույն և արդյունավետ միջոցը տեղեկատվության ազատությունն է:

Արդեն 8 տարի է՝ գործում է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը (այսուհետ նաև՝ Օրենք), սակայն տեղեկատվության ազատության ոլորտի ամբողջական մոնիտորինգ իրականացվել է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից 2003թ.-ին՝ անմիջապես «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո: Եվս մեկ ամբողջական մոնիտորինգ իրականացվել է 2004թ.-ին (տես՝ <http://www.foi.am/hy/research/item/344/>):

Վերջին տարիներին ՏԱ օրենսդրության կիրառման պրակտիկայում բավականին շատ փոփոխություններ և դրական արդյունքներ են գրանցվել, և կարիք կա պարզելու, թե ինչպես են տեղեկատվություն տնօրինողներն իրականացնում Օրենքի պահանջները, ինչպես են պատասխանում տեղեկություն ստանալու հարցումներին, ինչպիսին են Օրենքի և տեղեկատվության ազատության իրավունքի կիրառման խնդիրները, ՏԱ ոլորտում ինչ բացթողումներ են անհապաղ լուծում պահանջում:

Ներկայացված մոնիտորինգը 2011թ.-ի մայիս-հունիս ամիսներին Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից իրականացրած տեղեկատվություն տնօրինող 50 մարմիններին ուղարկված տեղեկություն ստանալու 250 հարցումներին տրված պատասխանների վերլուծությունն է: 250 տեղեկություն ստանալու հարցումներից 173-ը ուղարկվել է գրավոր՝ փոստային առաքմամբ: 37 հարցում ուղարկվել է էլեկտրոնային տարբերակով և 40 հարցում ներկայացվել է բանավոր՝ հեռախոսազանգերի միջոցով:

Մոնիտորինգի նպատակը և խնդիրները

2011 թ.-ի մարտից ԵԱՀԿ Երևանի գրասենյակի և ԱՄՆ ՄՁԳ-ի կողմից համաֆինանսավորվող և ԻԱԿ-ի կողմից իրականացվող «Տեղեկատվության ազատության կիրառումը ՀՀ-ում» ծրագրի շրջանակներում իրականացվել է այս մոնիտորինգը, որի նպատակներն են.

- պարզել, թե ինչպես են պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և հանրային նշանակության կազմակերպությունները պատասխանում քաղաքացիների՝ տեղեկություն ստանալու հարցումներին,
- զնահատել տեղեկատվություն տնօրինող մարմիններին՝ հարցումներին պատասխանելու ժամկետների և լիարժեքության հիման վրա,
- պարզել, թե պետական մարմիններում ինչպես են կիրառվում տեղեկատվության ազատության իրավունքի իրացման էլեկտրոնային հնարավորությունները,
- վերհանել տեղեկատվության ազատության ոլորտում տեղեկատվություն տնօրինող մարմինների ակտիվությունը և սեփական նախաձեռնությամբ տեղեկությունների հրապարակումը, հղումները, մերժումները:

Մոնիտորինգն իրականացվել է 2011թ.-ի մայիս-հունիս ամիսներին:

«Տեղեկատվության ազատության կիրառումը ՀՀ-ում» ծրագրի շրջանակներում ստեղծվել է նաև www.givemeinfo.am կայքը՝ որպես էլեկտրոնային մեխանիզմ՝ նպաստելու պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների թափանցիկ աշխատանքին: Այս կայքը ներկայացնում է տեղեկատվություն տնօրինող մարմինների (պետական կառավարման մարմիններ, տեղական ինքնակառավարման մարմիններ, պետական հիմնարկներ, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություններ, հանրային նշանակության կազմակերպություններ) կողմից տեղեկատվության ազատության իրավունքի կիրառման վիճակագրությունը:

Կայքը հնարավորություն է տալիս յուրաքանչյուրին, ով դիմել է տեղեկատվություն տնօրինող որևէ մարմնի, կայք ներմուծել իր հարցումը, հարցման պատասխանը՝ եթե առկա է, ներկայացնել նկարագրություն: Արդյունքում, քաղաքացիների՝ տեղեկություն ստանալու հարցումները նույնպես ներառվում են վիճակագրության մեջ՝ ներկայացնելով տեղեկատվության ազատության ամբողջական պատկերը:

www.givemeinfo.am կայքը հնարավորություն է տալիս ծանոթանալ ներմուծված SU հարցումների վիճակագրությանը ըստ մի քանի չափանիշների՝ լիարժեք ժամանակին պատասխան ստացած հարցումներ, ուշացած պատասխան ստացած հարցումներ, թերի, մերժված, անպատասխան մնացած հարցումներ և այլն: Բացի այդ, կայքում ներկայացված է տեղեկատվություն տնօրինողների ցանկ, որտեղ կարելի է ծանոթանալ տվյալ մարմնի կողմից SU հարցումներին պատասխանելու վիճակագրությանը:

Այս մոնիտորինգի ընթացքում ուղարկված տեղեկություն ստանալու հարցումները ևս ներմուծված են www.givemeinfo.am կայք: Յուրաքանչյուր հարցում ներկայացված է համառոտ նկարագրությամբ, կցված են հարցման պատճեն, պատասխանի առկայության դեպքում նաև՝ պատասխանի պատճեն և դրան կից փաստաթղթերը:

Մոնիտորինգի մեթոդաբանությունը

Մոնիտորինգի հիմնական մեթոդը ներառում է տարբեր դիմողների կողմից պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և հանրային նշանակության կազմակերպություններին հարցումներ ուղարկելը: Արդյունքում վերլուծվել է տեղեկություն ստանալու հարցումներին տեղեկություն տնօրինող մարմինների կողմից պատասխանելու գործընթացը՝ պատասխանների բովանդակությունը, պատասխանելու ժամկետները և այլն:

Տեղեկություն ստանալու հարցումները

2011թ.-ի մայիս-հունիս ամիսներին 10 դիմողների կողմից ուղարկվել է 250 հարցում 10 պետական կառավարման կենտրոնական մարմինների, 10 մարզպետարանների, 10 քաղաքպետարանների, 10 գյուղապետարանների և 10 հանրային նշանակության կազմակերպությունների՝ յուրաքանչյուրին 5-ական հարցում:

250 հարցումների մեծամասնությունը՝ 173 հարցում, ուղարկվել է գրավոր, փոստային առաքմամբ: 37 հարցում ուղարկվել է էլեկտրոնային տարբերակով՝ պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեներով և 40 հարցում ներկայացվել է բանավոր՝ հեռախոսազանգերի միջոցով: Տեղեկատվություն տնօրինող յուրաքանչյուր մարմնի ուղարկվել է տեղեկություն ստանալու 5 հարցում, որոնցից առնվազն 3-ը գրավոր, մեկ էլեկտրոնային և բանավոր հարցումներ:

Հարցերի տեսակները երկուսն են՝ պարզ և բարդ/զգայուն: Պարզ հարցումները ներառում են այնպիսի հարցեր, որոնց պատասխանները պետք է պատրաստ և հասանելի լինեն տվյալ գերատեսչությունում. օրինակ, խնդրվել է տրամադրել տեղեկություն տնօրինող մարմնի՝ տեղեկություն ստանալու հարցումների վիճակագրությունը: Սա պարզ հարցում է, քանի որ Օրենքի համաձայն՝ ՏԱ հարցումների վիճակագրական տվյալները պարտադիր հրապարակման ենթակա տեղեկություններ են և պետք է հրապարակվեն տարին առնվազն մեկ անգամ:

Բարդ հարցումները ներառում են հարցեր, որոնց պատասխանների տրամադրումը պահանջում է հավելյալ աշխատանք, ուսումնասիրություն, այսինքն՝ պատասխանը պետք է պատրաստվի. օրինակ, խնդրվել է տրամադրել տեղեկատվություն տնօրինող մարմնին պատկանող շինությունների վերանորոգումների, շինարարական աշխատանքների, դրանք իրականացնող ընկերությունների և շինարարական աշխատանքների ծախսերի վերաբերյալ տեղեկություն: Սա բարդ հարցում է, քանի որ ներկայացված հարցերը տարբեր են, կարող են ծավալուն լինել, և կարող է անհրաժեշտ լինել տվյալներ հավաքել հարցման պատասխանը պատրաստելու համար կատարել որոշակի աշխատանք:

Բարդ հարցումների հետ համատեղ դիտարկվում են նաև զգայուն հարցերը: Դրանք այն հարցումներն են, որոնց տեղեկություն տնօրինող մարմնի ղեկավարը կամ տեղեկություն տնօրինող մարմինը չի ցանկանա պատասխանել՝ կախված պատասխանի հնարավոր սուբյեկտիվ ազդեցությունից. օրինակ, խնդրվել է տրամադրել տեղեկատվություն տնօրինող մարմնի դեմ եղած դատական գործերի վերաբերյալ: Սա զգայուն հարց է, քանի որ այն դատական գործերի դեպքում, երբ վճիռ է կայացվել ընդդեմ տեղեկատվություն տնօրինող մարմնի, տվյալ մարմինը հանդես է գալիս բացասական, վատ լուսի ներքո: *Մոնիտորինգի ընթացքում տեղեկություն տնօրինող մարմիններին ուղղված հարցերը ներկայացված են Հավելված 2-ում, էջ՝ 38:*

Տեղեկություն տնօրինող մարմինները

Ընտրվել է տեղեկություն տնօրինող 50 մարմին.

- 10 պետական կառավարման մարմին,
- 10 մարզպետարան,
- 10 քաղաքապետարան. ընտրվել են մարզկենտրոնները, բացառությամբ Ստեփանավանի քաղաքապետարանի, որն ընտրվել է տեղեկատվության ազատության իրավունքի ոլորտում անցյալի բացասական փորձի պատճառով:
- 10 գյուղապետարան. յուրաքանչյուր մարզից ընտրվել է մեկական գյուղապետարան: Հիմնականում հաշվի է առնվել տեղեկատվության ազատության ոլորտում տվյալ գյուղապետարանի փորձը՝ ինչպես դրական, այնպես էլ բացասական. օրինակ, Ազատանի գյուղապետարանը բաց աշխատանքի համար Ինֆորմացիայի ազատության կենտրոնի՝ ՏԱ մրցանակաբաշխության ժամանակ ստացել է Ոսկե բանալի մրցանակ: Ելփինի և Լեւոնիի գյուղապետարանների դեմ ԻԱԿ-ը դատական գործեր է ունեցել՝ ՏԱ իրավունքը խախտելու համար: Գյուղապետարաններից մեծամասնությունում ԻԱԿ-ը տեղադրել է տեղեկատվական ցուցատախտակներ և այլն: Այսինքն, ընտրված գյուղապետարանները առնչվել են տեղեկատվության ազատության իրավունքին:
- 10 հանրային նշանակության կազմակերպություն. ընտրվել են հասարակական կարևոր ոլորտներից մեկը՝ առողջապահության ոլորտը ներկայացնող 5 բժշկական հաստատություն: Այս դեպքում նույնպես հաշվի է առնվել այն հանգամանքը, որ քաղաքացիները շատ են առնչվում բժշկական հաստատությունների հետ: Հանրային նշանակության մյուս 5 կազմակերպությունները ընտրվել են ըստ իրենց հանրային նշանակության և ներկայացնում են բնակչության կոմունալ սպասարկման ոլորտները՝ ջուր, էլեկտրաէներգիա, հեռախոսակապ և այլն: Իսկ «Քեթրին Գրուպ» ՍՊԸ-ի ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ այս կազմակերպության գործունեության մեջ են մտնում ինչպես պարենային, այնպես էլ ոչ պարենային ապրանքների ներմուծումը՝ ավտոմեքենաների բիզնես, գյուղատնտեսություն, ինչպես նաև կազմակերպությանն է պատկանում «Ֆրեշ» սուպերմարկետների ցանցը, որը ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի՝ 2011թ.-ի հունիսի 8-ի որոշմամբ մանրածախ առևտրի ոլորտում համարվել է գերիշխող դիրք զբաղեցնող: *Մոնիտորինգում ընդգրկված տեղեկություն տնօրինող մարմինների ցանկը տես՝ Հավելված 1-ում, էջ՝ 38:*

Դիմողները

Հարցումներն ուղարկել են 10 դիմողներ: Յուրաքանչյուրը ներկայացրել է 25 հարցում, որոնցից առնվազն 15-ը գրավոր, նաև էլեկտրոնային և բանավոր հարցումներ: Դիմողները 5 տարբեր խմբեր են ներկայացնում, որոնցից յուրաքանչյուրում ներառված են 2-ը, ովքեր ունեն համանման կարգավիճակ՝ ըստ զբաղվածության, աշխատանքի և սոցիալական խմբի:

- 1-ին խումբ. ՏԱ ոլորտում մասնագիտացած կազմակերպություն և ՏԱ ոլորտում չմասնագիտացած կազմակերպություն,
- 2-րդ խումբ՝ լրագրողներ, մամուլը ներկայացնող լրագրող և հեռուստատեսությունը ներկայացնող լրագրող,
- 3-րդ խումբ՝ խոցելի խմբեր. թոշակառու և հաշմանդամ,
- 4-րդ խումբ՝ ուսանողներ. տարբեր մարզերում բնակվող 2 ուսանող,
- 5-րդ խումբ՝ բաժանում ըստ մասնագիտության՝ մանկավարժ և իրավաբան:

ԳԼՈՒԽ Ա Տեղեկատվության ազատության իրավական կարգավորումը

Ա.1 Միջազգային պարտավորություններ

Տեղեկատվության ազատության ոլորտը Հայաստանի Հանրապետությունում կարգավորվում է ՀՀ կողմից վավերացված միջազգային իրավական ակտերով, ՀՀ Սահմանադրությամբ, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով: Հայաստանը՝ որպես մի շարք միջազգային կազմակերպությունների անդամ, ստորագրել է մարդու իրավունքներին վերաբերող կարևորագույն միջազգային փաստաթղթերը: Դրանով իսկ Հայաստանը պարտավորվել է հարգել մարդու իրավունքները, այդ թվում՝ արտահայտվելու և տեղեկատվության ազատության իրավունքները:

Տեղեկություն փնտրելու և ստանալու իրավունքը հռչակվում է Մարդու իրավունքների համընդհանուր Հռչակագրի 19-րդ, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Եվրոպական կոնվենցիայի 10-րդ, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային համաձայնագրի 19-րդ հոդվածներով, Պաշտոնական փաստաթղթերի հասանելիության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայով:

- Որպես ՄԱԿ-ի անդամ (1992 թ.-ից)՝ Հայաստանը միացել է **«Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին»**, որի Հոդված 19-ում հռչակվում է հետևյալը.

«Յուրաքանչյուր ոք ունի համոզմունքներ ունենալու և արտահայտվելու իրավունք. այս իրավունքը ներառում է համոզմունքներին անարգել հավատարիմ մնալու և տեղեկություններ ու գաղափարներ որոնելու, ստանալու ու տարածելու ազատություն, լրատվության ցանկացած միջոցներով, անկախ պետական սահմաններից»:

Համաձայն Հռչակագրի նախաբանի՝ ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան հռչակել է մարդու իրավունքների համընդհանուր Հռչակագիրը որպես մի խնդիր, որի կատարմանը պիտի ձգտեն բոլոր ժողովուրդներն ու պետությունները, այն առումով, որպեսզի յուրաքանչյուր մարդ ու հասարակության անեն մի անդամ, մշտապես նկատի առնելով սույն Հռչակագիրը, ձգտի լուսավորության ու կրթության միջոցով օժանդակել այդ իրավունքների ու ազատությունների հարգմանը և ազգային ու միջազգային առաջադիմական միջոցառումների միջոցով դրանց համընդհանուր և արդյունավետ ճանաչման ու իրականացման ապահովմանը...

Այսպիսով, ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան Հռչակագրում ամրագրված այլ իրավունքների հետ մեկտեղ գաղափարներ, հետևաբար նաև՝ տեղեկություններ փնտրելու, ստանալու և տարածելու իրավունքը համարել է նախապայման, որը կնպաստի, «որպեսզի մարդու իրավունքները պաշտպանվեն օրենքի ուժով..., որպեսզի մարդը հարկադրված չլինի դիմելու բռնության ու ճնշման դեմ ուղղված ապստամբության՝ որպես վերջին միջոցի...», այնպիսի մի աշխարհի ստեղծման նախապայման, «որտեղ մարդիկ կունենան խոսքի ու համոզմունքների ազատություն և զերծ կլինեն վախից ու կարիքից»: Այսինքն, ըստ էության՝ սա իրավական օրինակելի պետության կայացման նախադրյալ է:

- 2002 թ.-ին Հայաստանը որպես Եվրոպայի խորհրդի անդամ, վավերացրել է **«Մարդու իրավունքների մասին» Եվրոպական կոնվենցիան**, որի 10-րդ հոդվածը պաշտպանում է արտահայտվելու և տեղեկատվության ազատությունը: Կարևորելով տեղեկություն փնտրելու և ստանալու իրավունքի դերը քաղաքացիական հասարակության ձևավորման մեջ՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը սահմանում է.

«Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: Այս

հոդվածը չի խոչընդոտում պետություններին՝ սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում»:

- Հայաստանը վավերացրել է նաև «**Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը** (ուժի մեջ է մտել 1993 թ.-ից), որի Հոդված 19-ում խոսվում է «սեփական կարծիք ունենալու» իրավունքի և «անկախ պետական սահմաններից, ցանկացած տեսակի տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու» ազատության մասին:

ՄԱԿ-ի՝ Մարդու իրավունքների կոմիտեն 2011թ.-ին մշակել է «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 19-րդ հոդվածի մեկնաբանման ուղեցույց: Անդրադառնալով տեղեկատվություն տնօրինողներին, տեղեկության հասկացությանը՝ ուղեցույցը ներառել է նաև դրույթներ հանրային նշանակություն ունեցող պաշտոնական փաստաթղթերի մատչելիության վերաբերյալ: Մասնավորապես, ուղեցույցում նշված է, որ տեղեկատվության ազատության իրավունքի իրականացման համար դաշնագրի մասնակից պետությունները պետք է ակտիվորեն հրապարակայնացնեն հանրային նշանակություն ունեցող պաշտոնական տեղեկությունները, ապահովեն այդպիսի տեղեկատվության հեշտ, արագ, արդյունավետ և պրակտիկ հասանելիությունը: Համաձայն ուղեցույցի՝ մասնակից պետությունները պետք է նաև համապատասխան միջոցներ ձեռնարկեն, որոնց դեպքում կապահովվի տեղեկության մատչելիությունը և տեղեկություններ փնտրելու և ստանալու հնարավորությունը. այդպիսի միջոց է, օրինակ, տեղեկատվության ազատության վերաբերյալ օրենսդրությունը: Ուղեցույցն արձանագրում է, որ պետք է ժամանակին ընթացք տրվեն տեղեկություն ստանալու հարցումներին՝ դաշնագրով սահմանված կանոններին համապատասխան: Անդրադարձ է կատարվել նաև տեղեկության համար վճարներին, ուղեցույցում սահմանելով, որ տեղեկության տրամադրման համար սահմանված վճարները չպետք է այնպիսին լինեն, որ տեղեկության տրամադրման արգելք հանդիսանան: Մասնակից պետությունները պետք է ապահովեն, որ տեղեկության տրամադրումը մերժվի միայն հիմնավոր պատճառներով, ինչպես նաև ստեղծվեն բոլոր քարկման մեխանիզմներ տեղեկության տրամադրումը մերժելու կամ տեղեկություն ստանալու հարցումներին չպատասխանելու դեպքերում:

- **Պաշտոնական փաստաթղթերի հասանելիության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան.**

2009թ.-ի հունիսի 18-ին Եվրոպայի խորհրդի կողմից ընդունված այս փաստաթուղթը սահմանում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման, ինչպես նաև հանրային նշանակության մարմինների պաշտոնական փաստաթղթերի մատչելիությունը և կարգավորում է դրա հետ կապված ընդհանուր իրավահարաբերությունները: Համաձայն կոնվենցիայի նախաբանի՝ կոնվենցիան ընդունվել է հաշվի առնելով պետական մարմինների թափանցիկության կարևորությունը բազմակարծ և ժողովրդավարական հասարակությունում, ինչպես նաև այն, որ՝

«պաշտոնական փաստաթղթերի հասանելիության իրավունքի գործադրումը հանրության համար տեղեկատվության աղբյուր է, օգնում է հանրությանը կարծիք կազմել հասարակության վիճակի և պետական մարմինների վերաբերյալ, նպաստում է պետական մարմինների ազնվությանը, կարողություններին, արդյունավետությանը և պատասխանատվությանը՝ դրանով իսկ օգնելով նրանց լեգիտիմության հաստատմանը»:

Կոնվենցիան, արձանագրելով, որ «պաշտոնական բոլոր փաստաթղթերն սկզբունքորեն ունեն հանրային բնույթ և կարող են գաղտնի պահվել միայն մյուսների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունից ելնելով», սահմանում է կոնվենցիան վավերացրած պետությունների պարտականությունը՝ երաշխավորելու յուրաքանչյուրի իրավունքը՝ հարցման հիման վրա ստանալ պետական մարմինների կողմից պահվող պաշտոնական փաստաթղթեր՝ առանց որևէ հիմքով խտրականության:

Պաշտոնական փաստաթղթերի հասանելիության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան տարածվում է օրենքով սահմանված տեղեկատվություն տնօրինող բոլոր մարմինների վրա և մեծամասամբ համակարգում է տեղեկատվության ազատության ուղղություններից մեկը՝ տեղեկատվություն տնօրինողի մոտ առկա, անկախ պահանջից և հարցման առկայությունից՝ արդեն պատրաստի, ձևավորված և մշակված տեղեկատվության (պաշտոնական փաստաթղթերի) մատչելիության և հրապարակայնության ընդհանուր հարցերը: Նշենք, որ այս կարևոր փաստաթուղթը ՀՀ դեռևս չի վավերացրել:

- Հայաստանը՝ որպես 1992 թ.-ից Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) մասնակից պետություն, պարտավորվել է հարգել «**Հելսինկյան եզրափակիչ ակտում**» և ԵԱՀԿ-ի հետագա հռչակագրերում արտացոլված չափանիշները:

Տեղեկատվության ազատության իրավունքը սահմանվում է նաև՝

- «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիայով (Օրիուսի կոնվենցիա, Օրիուս, 25.06.1998թ.),
- 1982թ. ապրիլի 29-ին ընդունված **խոսքի և տեղեկատվության ազատության մասին հռչակագրով**, ինչպես նաև
- Հանրային մարմինների մոտ առկա տեղեկատվության մատչելիության վերաբերյալ **NR (81) 19 Հանձնարարականով**,
- Արխիվների մատչելիության վերաբերյալ եվրոպական քաղաքականության մասին **N' R (2000) 13 Հանձնարարականով**:

Ա.2 ՀՀ Սահմանադրություն

2005 թ.-ի նոյեմբերին ընդունված սահմանադրական փոփոխություններով տեղեկություններ ստանալու իրավունքը հռչակվել է որպես սահմանադրական իրավունք: Տեղեկություններ ստանալու իրավունքը ճանաչվել է որպես մարդու հիմնարար իրավունքներից մեկը՝ բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտով՝ ՀՀ Սահմանադրությամբ՝ «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները» գլխում՝ մարդու արժանապատվության, կյանքի, օրենքի առջև հավասարության, դատական պաշտպանության իրավունքների հետ մեկտեղ: ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածներն ամրագրում են յուրաքանչյուր քաղաքացու՝ տեղեկություններ ստանալու իրավունքը:

Այսպես, **27-րդ հոդվածն ամրագրում է.**

«Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից»:

Դա նշանակում է, որ յուրաքանչյուրը՝ անկախ նրանից՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, թե ոչ, անկախ սեռից, տարիքից, մասնագիտությունից, քաղաքացիությունից կարող է բոլոր աղբյուրներից տեղեկություններ պահանջել, ստանալ և տարածել ցանկացած միջոցով, ընդ որում, ինչպես Հայաստանում, այնպես էլ Հայաստանից դուրս:

27.1 հոդվածում նշվում է.

«Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»:

Այս հոդվածը սահմանում է յուրաքանչյուրի՝ կառավարման մարմիններին դիմելու և պարտադիր պատասխան ստանալու իրավունքը: Ընդ որում՝ հոդվածից հետևում է, որ պատասխանը չպետք է անհարկի ձգձգվի և պետք է լինի լիարժեք:

Մեկ այլ՝ Սահմանադրության **հոդված 23-րդով**, ամրագրված է յուրաքանչյուրի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իրեն վերաբերող տեղեկություններին ծանոթանալու իրավունքը:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42.1 հոդվածի՝

«Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքներն ու ազատություններն իրենց էությանը կիրառելի են դրանց նկատմամբ»:

Քանի որ տեղեկություններ փնտրելու և ստանալու իրավունքի իրականացումը կարող է բխել իրավաբանական անձի շահերից, իսկ իրավաբանական անձն էլ ի դեմս իր ղեկավարի (տնօրեն, նախագահ և այլն), հնարավորություն ունի փնտրել, ստանալ և վերլուծել իրեն անհրաժեշտ տեղեկությունները, հետևաբար տեղեկություններ փնտրելու և ստանալու իրավունքն իր էությանը կիրառելի է իրավաբանական անձանց նկատմամբ: Այսինքն, իրավաբանական անձանց վրա նույնպես տարածվում է ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը:

ՀՀ Սահմանադրության մի շարք այլ հոդվածներից նույնպես բխում է քաղաքացիների տեղեկատվություն ստանալու իրավունքի կարևորությունը: Այսպես, **33.2 հոդվածի համաձայն**.

«Պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում բնապահպանական տեղեկատվությունը թաքցնելու կամ դրա տրամադրումը մերժելու համար»:

Սահմանադրության մեկ այլ՝ **69-րդ հոդվածի 2-րդ մասն էլ սահմանում է, որ**.

«Ազգային ժողովի նիստերը դռնբաց են»:

Անուղղակիորեն հրապարակայնությանն ու տեղեկատվության ազատությանն են վերաբերում նաև, դատական գործի հրապարակային քննությունն ամրագրող՝ ՀՀ Սահմանադրության **19-րդ հոդվածը**, որի 1-ին մասի համաձայն՝

«Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք»:

Ա.3 Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ Օրենսգիրք և ՀՀ Քրեական Օրենսգիրք

Տեղեկատվության ազատության իրավունքի խախտման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված է քրեական և վարչական պատասխանատվություն: Վարչական պատասխանատվությունը սահմանված է **Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189՝ հոդվածով**, որի համաձայն՝

օրենքով նախատեսված տեղեկությունը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև հիսնապատիկի չափով: Նույն խախտումը, որը կատարվել է կրկին անգամ՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

Նշենք նաև, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 254-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկատվության ազատության իրավունքը խախտած պաշտոնյային պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ չէ դատարան ներկայացնել վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն:

Տեղեկատվության ազատության իրավունքի խախտման համար պատասխանատվություն նախատեսված է նաև ՀՀ Քրեական օրենսգրքով: Այսպես, **Քրեական օրենսգրքի 148-րդ հոդվածը** սահմանում է, որ

անձին՝ անմիջականորեն նրա իրավունքներն ու օրինական շահերը շոշափող և սահմանված կարգով հավաքված փաստաթղթերը կամ նյութերը ներկայացնելուց պաշտոնատար անձի կողմից ապօրինի հրաժարվելը կամ անձին այդպիսի տեղեկությունը ոչ լրիվ կամ դիտավորյալ աղավաղված ներկայացնելը, եթե դա տվյալ անձի իրավունքներին և օրինական շահերին վնաս է պատճառել՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

Այսինքն, ի տարբերություն վարչական իրավախախտման, տեղեկություն չտրամադրելը քրեական պատասխանատվություն կարող է առաջացնել, եթե դա վնաս է պատճառել տեղեկություն ստանալու համար դիմող անձին:

Քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածը սահմանում է լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելու համար պատասխանատվություն, ինչն անմիջականորեն առնչվում է տեղեկատվության ազատությանը: Այսպես, այս հոդվածը նշում է, որ

լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը կամ նրան տեղեկություններ տարածելուն կամ տարածելուց հրաժարվելուն հարկադրելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով: Նույն արարքները, որոնք կատարել է պաշտոնատար անձն իր պաշտոնական դիրքն օգտագործելով՝ պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա: Իսկ նույն արարքները, որոնք կատարվել են լրագրողի կամ նրա մերձավորի կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով՝ պատժվում են ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով:

Քրեական օրենսգրքը բավական խիստ պատիժ է նախատեսում այնպիսի կարևոր տեղեկություններ թաքցնելու համար, ինչպիսիք են մարդկանց կյանքի կամ առողջության համար վտանգավոր հանգամանքների վերաբերյալ տեղեկությունները և շրջակա միջավայրի աղտոտման վերաբերյալ տեղեկությունները: Այս տեղեկությունները թաքցնելու կամ աղավաղելու համար պաշտոնյան կարող է անգամ դատապարտվել ազատազրկման մինչև 6 տարի ժամկետով:

Ա.4 «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք

Հայաստանում տեղեկատվության ազատության իրավունքը կարգավորող հիմնական իրավական ակտը «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքն է: Լինելով տեղեկատվության ազատության ոլորտում աշխարհի լավագույն օրենքներից մեկը՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը կարգավորում է տեղեկատվության ազատության ոլորտի հիմնական իրավահարաբերությունները՝ մասնավորապես սահմանելով ՏԱ սկզբունքները, տեղեկատվություն տնօրինող մարմիններին, հարցում ներկայացնելու և քննարկելու կարգը, տեղեկատվության տրամադրման պայմանները, ժամկետները, տեղեկատվության ազատության սահմանափակումները և մերժման հիմքերը:

Օրենքի համապատասխան դրույթներին պարբերաբար կանդիդատներն են մոնիտորինգի տարբեր բաժիններում:

ԳԼՈՒԽ Բ.


«Տեղեկատվության ազատությունը Հայաստանի Հանրապետությունում». մոնիտորինգի արդյունքները*

Բ.1 Արդյունքների ընդհանուր պատկերը

2011 թ.-ի մայիս-հունիս ամիսներին 10 դիմողների կողմից 50 տեղեկություն տնօրինող մարմիններ ուղարկվել է 250 տեղեկություն ստանալու գրավոր, բանավոր և էլեկտրոնային հարցում: 250 հարցումներից՝

- 56%-ին (140 հարցում), տրվել է լիարժեք պատասխան, որոնցից 100-ին՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետներում, 40-ին՝ ուշացումով (ուշացած լիարժեք պատասխան):
- 3.6%-ը (9 հարցում) հղումով է՝ հղում է արվել տեղեկություն տնօրինող այլ մարմնի կամ հարցման գրավոր ձևին,
- 1.6%-ին (4 հարցում) տրամադրվել է թերի պատասխան,
- 0.4%-ը (1 հարցում) օրինական մերժվել է՝ (օրինական մերժում),
- 2.8% (7 հարցում) մերժվել է անհիմն՝ (անհիմն մերժում և անհիմն պատասխան),
- 30% (75 հարցում) մնացել է անպատասխան՝ (լուռ մերժում):
- 5.6% (14 հարցում) չի հասել տեղեկատվություն տնօրինողին՝ (չընդունված հարցում), այսինքն՝ դիմողը չի կարողացել ներկայացնել հարցումը՝ տեղեկություն տնօրինող պաշտոնյայի անհասանելիության պատճառով:

Աղյուսակ 1. Մոնիտորինգի արդյունքների ընդհանուր պատկերը



* Մոնիտորինգում ներկայացված բոլոր արդյունքները 2011թ.-ի օգոստոսի 1-ի դրությամբ են:

Բ.2 Արդյունքներն ըստ պատասխանների տեսակների

Հարցումների պատասխանների բովանդակությունը վերլուծելիս հաշվի են առնվել պատասխան ստացած 161 հարցումների արդյունքները, քանի որ ընդհանուր 250 հարցումներից 75-ը մնացել է անպատասխան, իսկ 14-ը չի հասել տեղեկատվություն տնօրինողին:

Օրենսդրական կարգավորումը. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ոչ հավաստի կամ ոչ լրիվ տվյալներ պարունակող տեղեկություն տրամադրած մարմինը կամ կազմակերպությունն այդ տեղեկությունն ստացած անձի գրավոր հարցման հիման վրա պարտավոր է անվճար տրամադրել ճշգրտված տվյալներով տեղեկություն, իսկ 12-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն տնօրինողը պարտավոր է տեղեկություններ փնտրող անձին տրամադրել հավաստի և իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն:

Վերոնշյալ հոդվածներն ըստ էության սահմանում են հարցման պատասխանի լիարժեքության պահանջը՝ տեղեկություն տնօրինողին պարտավորեցնելով տրամադրել ոչ միայն հավաստի, այսինքն՝ ճշգրտված, այլ նաև՝ ամբողջական տեղեկություն: Ստացված պատասխանները պատշաճ են համարվել, եթե՝

- գրավոր փոստով ուղարկված պատասխանները տրամադրվել են տեղեկատվություն տնօրինող մարմնի ձևաթղթով և/կամ պատասխանող պաշտոնյայի ստորագրությամբ,
- էլեկտրոնային պատասխանները ստացվել են տեղեկատվություն տնօրինողի պաշտոնական կամ պատասխանող պաշտոնյայի աշխատանքային էլեկտրոնային հասցեից:

ա. լիարժեք* պատասխաններ՝ ժամանակին և ուշացած

Պատասխան ստացած 161 հարցումներից 140-ին տեղեկություն տնօրինող մարմինը տվել է լիարժեք պատասխան (ժամանակին և ուշացած լիարժեք պատասխաններ): Սա կազմում է ընդհանուր 250 հարցումների 56%-ը և պատասխան ստացած 161 հարցումների 87%-ը:

- ժամանակին լիարժեք տրամադրվել է 100 պատասխան, որը կազմում է պատասխան ստացած հարցումների 62.1%-ը:
- Ուշացած տրամադրվել է 40 պատասխան, որը կազմում է պատասխան ստացած հարցումների 24.8%-ը:

Մոնիտորինգի ընթացքում ամենաարագ և լիարժեք պատասխանը ստացվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից: Էլեկտրոնային հարցումն ուղարկելուց ընդամենը 1 ժամ անց էլեկտրոնային գրությամբ տրամադրվել էր խնդրված տեղեկությունները (տես՝ <http://www.givemeinfo.am/hy/case/72/>):

ԻԱԿ-ին Արտաշատի քաղաքապետարանի կողմից տրված պատասխանը լիարժեք ժամանակին և ամենածավալուն պատասխաններից է: Քաղաքապետարանը փոստով ուղարկված հարցմանը պատասխանել է հարցումն ուղարկելուց 3 օր հետո, 63 էջ տեղեկատվությամբ՝ առանց դրա դիմաց գումար պահանջելու (<http://www.givemeinfo.am/hy/case/82/>):

Բանավոր տրամադրված ամենադրական լիարժեք պատասխանը Օշականի գյուղապետարանին է, որը լրագրողի՝ հեռախոսազանգով ներկայացված բանավոր հարցմանը խոստացել էր պատասխանել հետադարձ զանգով՝ խնդրվող տեղեկությունները ճշտելուց հետո: Լրագրողի զանգից մեկ ժամ անց, Օշականի գյուղապետարանը հետադարձ զանգով տրամադրել է լիարժեք բանավոր պատասխան: Նշենք, որ Օշականի գյուղապետարանը բովանդակության առումով առհասարակ ամենադրական արդյունքն է ցույց տվել՝ իրեն հասցեագրված բոլոր հարցումներին (4 գրավոր և 1 բանավոր հարցում) տալով լիարժեք ժամանակին պատասխան (<http://www.givemeinfo.am/hy/entity/85/>):

Լիարժեք տրամադրված ուշացած պատասխանի դրական օրինակ է «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ-ին Նոր Խարբերդի գյուղապետարանի տրամադրած պատասխանը. ՀԿ-ն

*«Լիարժեք» համարվում են այն ժամանակին և ուշացած պատասխանները, որոնցով դիմողը ստացել է պահանջվող ամբողջական տեղեկությունները:

խնդրել էր տրամադրել գյուղի ավագանու 2011թ.-ի նիստերի արձանագրությունների պատճենները: Հարցումն ուղարկելուց 11 օր անց գյուղապետարանի ներկայացուցիչը խնդրվող ողջ տեղեկությունները՝ 28 թերթից բաղկացած արձանագրությունների պատճենները, առձեռն ներկայացրել է կազմակերպության գրասենյակ: Թեև գյուղապետարանը պատասխանը տրամադրել է ժամկետների խախտմամբ, սակայն այս դեպքն առանձնանում է նրանով, որ գյուղապետարանը խնդրվող տեղեկությունները ՔՀԻ գրասենյակ է ուղարկել տաքսիով: Այսպիսով, գյուղապետը ոչ միայն չի պահանջել փոխհատուցել 10 էջը գերազանցող տեղեկությունների պատճենահանման ծախսերը, այլ նաև լրացուցիչ միջոցներ է ձեռնարկել հարցմանը պատասխանելու համար՝ սեփական միջոցներով տրամադրել պահանջվող տեղեկությունները (<http://www.givemeinfo.am/hy/case/102/>):

բ. Հիմնավոր հղումներ

Ուղարկված 250 հարցումներից 9-ին ի պատասխան՝ տեղեկություն տնօրինողը հիմնավոր հղում է արել կամ այլ մարմնի վրա, կամ բանավոր հարցման դեպքում հղում է արել հարցման գրավոր ձևին, այսինքն՝ խնդրել է հարցումը ներկայացնել գրավոր: Հղումները կազմում են պատասխան ստացած 161 հարցումների 5.6%-ը:

Օրենսդրական կարգավորումը. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետի 2-րդ և 10-րդ կետի դրույթներն ըստ էության արձանագրում են տեղեկատվություն տնօրինողի հնարավորությունը հղում անելու հրապարակված տեղեկատվության աղբյուրին, ինչպես նաև տեղեկությունը չտնօրինելու դեպքում՝ տեղեկատվություն տնօրինող այլ մարմնի:

Ինչ վերաբերում է հարցման գրավոր ձևին արված հղումներին, ապա «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ բանավոր հարցման պատասխանը տրվում է, եթե՝

1. պահանջվող տեղեկության տրամադրումը կարող է կանխել հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին և ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանն սպառնացող վտանգը,
2. անհրաժեշտ է ճշտել տվյալ տեղեկատվությունը տնօրինողի մոտ համապատասխան տեղեկության առկայության փաստը,
3. անհրաժեշտ է պարզաբանել տվյալ տեղեկատվությունը տնօրինողի կողմից գրավոր հարցումների քննարկման կարգը:

Օրենքի տրամաբանությունից բխում է, որ վերոնշյալ դեպքերից բացի մնացած բոլոր դեպքերում տեղեկատվություն տնօրինողը կարող է հղում անել հարցման գրավոր ձևին, այսինքն խնդրել, որպեսզի հարցումն ուղարկվի գրավոր: Օրինակ, այս մոնիտորինգի ընթացքում իրավաբանի բանավոր հարցմանն ի պատասխան «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի իրավաբանը խնդրել էր գրավոր դիմել, քանի որ պահանջվող տեղեկությունները տրամադրելու համար անհրաժեշտ էր կատարել որոշակի ընթացակարգով լրացուցիչ աշխատանք (<http://www.givemeinfo.am/hy/case/289/>):

Նույն կերպ՝ ՀՀ բնապահպանության նախարարության մամուլի քարտուղարը նախարարության ծառայողական մեքենաների մասին ուսանողի բանավոր հարցմանն ի պատասխան խնդրել էր հարցումը գրավոր ներկայացնել, որպեսզի նախարարությունը կարողանա պատշաճ պատասխանել (<http://www.givemeinfo.am/hy/case/293/>):

Իսկ «Հատուկ պոլիկլինիկա» ՓԲԸ-ի պատասխանը հղում է տեղեկատվություն տնօրինող այլ մարմնին: ԻԱԿ-ը խնդրել էր հայտնել, թե որտե՞ղ և ի՞նչ կարգով են հրապարակվել պոլիկլինիկայի 2010թ.-ի բյուջեն և դրա կատարման հաշվետվությունները: Պոլիկլինիկան պատասխանել էր ԻԱԿ-ի հարցմանը հղումով՝ նշելով, որ պոլիկլինիկայի բյուջեն և դրա կատարման հաշվետվությունը տեղադրված են ՀՀ առողջապահության նախարարության պաշտոնական ինտերնետային կայքում (<http://www.givemeinfo.am/hy/case/377/>):

գ. Թերի պատասխաններ

Պատասխան ստացած 161 հարցումներից միայն 4-ին է տրամադրվել թերի պատասխան: Սա կազմում է պատասխան ստացած հարցումների 2.5%-ը:

Դրանցից են օրինակ, «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ-ին տրված Գարգառի գյուղապետարանի պատասխանը: 4-օրյա ժամկետում գյուղապետարանը տրամադրել է պատասխան գրություն՝ ավագանու նիստերի արձանագրությունների պատճենները 3 էջ առդիրով: Արձանագրությունների ևս 17 էջ պատճեններ տրամադրելու համար գյուղապետարանը պահանջել էր վճարել 1000 դրամ՝ որպես պատճենահանման և տրանսպորտային ծախս: Պատասխանը համարվում է թերի, քանի որ ՏԱ մասին ՀՀ օրենքի համաձայն՝ տեղեկության տրամադրման համար գանձում չի կատարվում մինչև 10 էջ տպագրված կամ պատճենահանված տեղեկություն տրամադրելիս, այլ ոչ՝ 3: Այսինքն, այս դեպքում գյուղապետարանի ներկայացրած 17 էջի պատճենահանման ծախսը փոխհատուցելու պահանջը չի բխում օրենքի պահանջներից, և գյուղապետարանը առնվազն պարտավոր էր չտրամադրված տեղեկության մի մասն էլ տրամադրել անվճար: Բացի այդ, գյուղապետարանը նշել է նաև տրանսպորտային ծախսի փոխհատուցում: Նշենք, որ բոլոր 250 հարցումների մեջ սա միակ և բացառիկ դեպքն է, երբ պահանջվել է տեղեկության տրամադրման վճար, որը, սակայն, չի բխել օրենքից (<http://www.givemeinfo.am/hy/case/103/>):

դ. Մերժումներ

Մոնիտորինգի ընթացքում ուղարկված 250 հարցումներից 14-ը հնարավոր չի եղել ուղղել տեղեկատվություն տնօրինողին վերջինիս անհասանելիության պատճառով, ուստի վերլուծվել են 236 հարցումները: Մոնիտորինգի ընթացքում արձագանգարվել է տեղեկատվության տրամադրման մերժման 83 դեպք, որոնցից.

- 1 օրինական մերժում,
- 4 անհիմն մերժում*,
- 3 անհիմն պատասխան*,
- 75 անպատասխան մնացած հարցում կամ լուռ մերժում*:

Օրենսդրական կարգավորումը. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինողը, մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա՝

- 1) պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք,
- 2) խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը,
- 3) պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալներ,
- 4) բացահայտում է մասնագիտական գործունեությանը պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք),
- 5) խախտում է հեղինակային իրավունքը և (կամ) հարակից իրավունքները:

Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինողը կարող է չպատասխանել բանավոր հարցումին, եթե տվյալ պահին դա խոչընդոտում է տեղեկատվություն տնօրինողի հիմնական պարտականությունների կատարմանը:

*«Անհիմն մերժում» են համարվում այն պատասխանները, երբ տեղեկատվություն տնօրինողը հրաժարվում է տրամադրել պահանջվող տեղեկություններն առանց օրինական հիմքերի:

*«Անհիմն պատասխան» են համարվում այն դեպքերը, երբ տեղեկատվություն տնօրինողը պահանջվող տեղեկությունը տրամադրելու համար օրենքից չբխող պահանջ է ներկայացնում դիմումատուին:

*«Լուռ մերժումներն» այն դեպքերն են, երբ տեղեկատվություն տնօրինողից որևէ պատասխան չի ստացվել:

Մոնիտորինգի ընթացքում ստացված 83 մերժումներից միայն մեկն է եղել օրինական, այսինքն՝ բխել է «Տեղեկատվության ազատության մասին» օրենքից. ուսանողի՝ հեռախոսազանգով բանավոր հարցմանն ի պատասխան ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության մամուլի քարտուղարը մերժել է հեռախոսով պատասխանել հարցերին, քանի որ նախապատրաստվել է նախարարությունում տեղի ունենալիք աշխատանքային քննարկմանը: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասը թույլ է տալիս չպատասխանել բանավոր հարցմանը, եթե տվյալ պահին դա խանգարում է պաշտոնյայի անմիջական աշխատանքային պարտականությունների կատարմանը: Ուստի, նախարարության մամուլի քարտուղարի մերժումը հիմնավոր էր (տես՝ <http://www.givemeinfo.am/hy/case/290/>):

Անհիմն մերժումներից է, օրինակ, Գյումրիի քաղաքապետարանի պատասխանը. «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ-ի գրավոր հարցմանն ի պատասխան՝ Գյումրիի քաղաքապետարանը հայտնել էր, որ խնդրված տեղեկությունները ստանալու համար անհրաժեշտ է ներկայանալ քաղաքապետարան էլեկտրոնային կրիչով (<http://www.givemeinfo.am/hy/case/111/>):

Նմանատիպ 2 անհիմն պատասխան է տրամադրել նաև Իջևանի քաղաքապետարանը՝ ի պատասխան իրավաբանի և ուսանողի հարցումներին՝ նշելով, որ խնդրվող տեղեկությունները ստանալու համար պետք է այցելել քաղաքապետարան (<http://www.givemeinfo.am/hy/case/134/> և <http://www.givemeinfo.am/hy/case/229/>):

Անհիմն արտառոց պատասխանի հեղինակ է ՀՀ Պետական եկամուտների կոմիտեն, որը գրավոր մերժել էր տրամադրել խնդրվող տեղեկությունները, որպես մերժման հիմք նշելով այն, որ ՀՀ կառավարության կողմից սահմանված չէ տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման կարգը, որը սահմանված է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով: Սակայն, նշենք, որ անկախ տվյալ կարգի առկայությունից, ՏԱ մասին օրենքն անմիջականորեն սահմանում է տեղեկություն տրամադրելու պարտականությունը: Նշենք նաև, որ Կառավարության կողմից համապատասխան կարգը չսահմանելու հիմքով տեղեկատվության տրամադրումը մերժելու արատավոր պրակտիկան առկա էր նաև նախկինում՝ Օրենքի ընդունման առաջին տարիների ընթացքում, սակայն վերջին տարիների ընթացքում տեղեկատվության տրամադրումն այդ պատճառաբանությամբ չէր մերժվել: Սա ՊԵԿ-ի կողմից տեղեկատվության ազատության իրավունքի չկիրառման բացասական օրինակ է (տես՝ <http://www.givemeinfo.am/hy/case/123/>): Հավելենք, որ այս պատասխանի համար 2011թ.-ի ՏԱ ամենամյա մրցանակաբաշխությանը Պետական եկամուտների կոմիտեն արժանացավ «Ժանգոտ կողպեք» մրցանակին (<http://www.foi.am/hy/awards-winners/>):

Լուռ մերժումներ

236 հարցումներից 75-ը՝ 31.8%, մնացել է անպատասխան, որը կազմում է ընդհանուր 250 հարցումների՝ 30 %-ը: Սրանք լուռ մերժումներն են:

Անպատասխան մնացած հարցումների մի քանիսի դեպքում տեղեկատվություն տնօրինողը թեև արձագանքել է հարցմանը, սակայն պատասխան այդպես էլ չի ստացվել: Այդպիսի դրական նախապատմություն ունի հետևյալ լուռ մերժումը. ՀԿ-ից բյուջեի մասին տեղեկություն ստանալու հարցում ստանալուց հետո «Քեթրին Գրուպ» ՍՊԸ-ի աշխատակիցը զանգել էր և նշել, որ իրենց կարծիքով բյուջեն համարվում է առևտրային գաղտնիք, այնուհետև հարցրել՝ բանավոր պատասխանեն, թե՞ գրավոր: ՔՀԻ-ի ներկայացուցիչը խնդրել էր գրավոր պատասխան ուղարկել, սակայն պատասխան այդպես էլ չի ստացվել (<http://www.givemeinfo.am/hy/case/120/>):


Իսկ Վերին Պտղնիի գյուղապետարանի լուռ մերժման նախապատմությունը բացասական է. «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ-ն խնդրել էր տրամադրել Վերին Պտղնիի ավագանու 2011թ.-ի նիստերի արձանագրությունների պատճենները: Գյուղապետարանը հարցումը թողել էր անպատասխան: Սակայն, հարցումն ուղարկելուց 3 օր անց գյուղապետարանից զանգել էին՝ ճշտելու համար, թե ինչ նպատակով են խնդրվել արձանագրությունները: Նշենք, նաև, որ համաձայն «ՏԱ մասին» օրենքի, հարցատուրն պարտավոր չէ հիմնավորել և բացատրել, թե ինչ նպատակով է ցանկանում ստանալ կամ օգտագործել պահանջվող տեղեկությունները: Գյուղապետը, չստանալով իր հարցի պատասխանը, չի տրամադրել պահանջվող տեղեկությունները (<http://www.givemeinfo.am/hy/case/105/>):

Բ.3 Արդյունքներն ըստ պատասխանների ժամկետների

Մոնիտորինգի ընթացքում ուղարկված 250 հարցումներից 45.2%-ի դեպքում ստացվել է ժամանակին պատասխան, 19.2%-ը ուշացած պատասխաններն են, իսկ 35.6% կազմում են լուռ մերժումները և չընդունված հարցումները:

Օրենսդրական կարգավորումը. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան պետք է տրվի այն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում: Սակայն, անճշտություններից խուսափելու համար մոնիտորինգի ընթացքում ստացված պատասխանների ժամկետները հաշվարկելիս որպես պատշաճ ժամկետ ընդունվել է 9-օրյա ժամկետը՝ նախատեսելով լրացուցիչ 2 աշխատանքային օր՝ որպես փոստային առաքման ժամկետ և 2 օր՝ հանգստյան օրերը: Հետևապես, պատասխանը համարվում է ժամկետանց, եթե այն չի ստացվել ՏԱ հարցումն ուղարկելուց 9 օրացույցային օր հետո: Հաշվի է առնվել պատասխան գրության ծրարի վրա դրվող փոստային կնիքում նշված ամսաթիվը, որը ցույց է տալիս, թե երբ է տեղեկատվություն տնօրինողը պատասխան գրությունը հանձնել փոստին: Այդ ամսաթիվն էլ հենց համարվում է պատասխանի տրամադրման ամսաթիվ: Էլեկտրոնային հարցումների դեպքում որպես պատշաճ ժամկետ հաշվի է առնվել ոչ թե 9 օրացույցային, այլ՝ 5 աշխատանքային օրը, քանի որ էլեկտրոնային նամակը հասցեատիրոջը հասնում է հենց ուղարկելու պահին:

Աղյուսակ 2. Մոնիտորինգի արդյունքներն ըստ ժամկետների



250 հարցումներից 75-ը լուռ մերժումներ են, իսկ 14 հարցում չի հասել տեղեկատվություն տնօրինողին: Այսինքն, ընդհանուր 89 հարցում պատասխան չի ստացել, և այդ հարցումներին պատասխանելու ժամկետներ չկան: Ուստի, ժամկետները վերլուծվել են ըստ պատասխան ստացած 161 հարցումների: 161 պատասխան ստացած հարցումներից 70.2%-ը (113 պատասխան) ստացվել է ժամանակին՝ իսկ 29.8%-ի (48 պատասխան) ուշացած է: Պատասխանելու միջին ժամկետը 11-12 օր էր:

Ժամանակին ստացված պատասխանների մեծ թիվը՝ 70.2%, վկայում է այն մասին, որ տեղեկությունների տրամադրման համար օրենքով սահմանված 5-օրյա ժամկետն իրատեսական է, և ցանկության դեպքում հեշտությամբ կ արելի է պատասխան տալ հենց այս ժամկետում: Եվ հակառակը. եթե մարմինը և դրա ղեկավարությունը չունեն քաղաքական կամք և համապատասխան գիտելիք,

միևնույն է տեղեկությունների տրամադրումն առանց հիմնավորման ուշանում է, պատասխանները լինում են թերի, կամ պարզապես հարցումներն անտեսվում են՝ դրանց պատասխանելը համարելով ոչ թե պարտականություն, այլ՝ հավելյալ աշխատանք:

Հարցումներին պատասխանելու ժամկետների առումով լավագույն պատասխանն է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ուղարկված էլեկտրոնային հարցման պատասխանը. Ինֆորմացիայի ազատության կենտրոնի էլեկտրոնային հարցմանը նախարարությունը պատասխանել է հենց նույն օրը՝ հարցումն ուղարկելուց մեկ ժամ անց:

Իսկ Օշականի գյուղապետարանն իրեն հասցեագրված բոլոր 5, այդ թվում բանավոր հարցմանը, պատասխանել է առանց ժամկետների խախտման (տես՝ <http://www.givemeinfo.am/hy/entity/85/>):

Պատասխանի տրամադրման ժամկետի առումով վատագույն արդյունքը ՀՀ Ազգային ժողովինն է. իրավաբանի հարցմանը Ազգային ժողովը պատասխանել է ավելի քան մեկ ամիս ուշացումով: Հավելենք, որ պատասխան գրությունը բաղկացած էր ընդամենը 2 տողից. «Տեղեկացնում ենք Ձեզ, որ 2010թ.-ին որևէ դատական և քաղաքացիական գործ ընդդեմ ՀՀ Ազգային ժողովի չի եղել»: Նշենք նաև, որ չնայած պատասխանը թվագրված էր 2011թ.-ի հուլիսի 10, սակայն ծրարի փոստային կնիքում նշված ամսաթիվը ցույց է տալիս, որ այն ուղարկվել է հուլիսի 18-ին: Այսինքն, Ազգային ժողովին 8 օր է անհրաժեշտ եղել պատրաստի պատասխանը փոստ հասցնելու համար (<http://www.givemeinfo.am/hy/case/122/>):

Համեմատության համար նշենք, որ իրավաբանի նմանատիպ հարցմանը Օշականի գյուղապետարանը պատասխանել է հարցումն ուղարկելուց 4 օր անց (<http://www.givemeinfo.am/hy/case/129/>), իսկ Կոտայքի մարզպետարանը 45 էջ առդիր պատճեններով պատասխանը իրավաբանին տրամադրել էր հարցումն ուղարկելուց 6 օր հետո (<http://www.givemeinfo.am/hy/case/140/>):

Իսկ օրինակ տեղեկատվություն տնօրինողի աշխատակիցների ստացած պարզևատրումների վերաբերյալ լրագրողի՝ տեղեկատվություն ստանալու գրավոր հարցմանը Աշտարակի քաղաքապետարանը պատասխանել է հարցումն ուղարկելուց 5 օր անց (<http://www.givemeinfo.am/hy/case/170/>), այնինչ նույն հարցմանը պատասխանելու համար Արմավիրի մարզպետարանից 20 օր է պահանջվել (<http://www.givemeinfo.am/hy/case/187/>):

Բ.4 Արդյունքներն ըստ տեղեկություն տնօրինողների

Վերլուծվող 250 հարցումներն ուղարկվել են 5 խումբ մարմինների՝ պետական կառավարման կետրոնական մարմիններ, մարզպետարաններ, քաղաքապետարաններ, գյուղապետարաններ, հանրային նշանակության կազմակերպություններ: Յուրաքանչյուր խմբում ներառվել են 10-ական մարմիններ, որոնցից յուրաքանչյուրը ստացել է 5-ական հարցում: *Մոնիտորինգում ընդգրկված տեղեկություն տնօրինող մարմինների ցանկը տես Հավելված 1-ում, էջ՝ 38:*

Օրենսդրական կարգավորումը. «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետը սահմանում է այն անձանց/մարմինների շրջանակը, որոնց վրա տարածվում է ՏԱ մասին օրենքը: Դրանք են.

- պետական կառավարման մարմինները,
- տեղական ինքնակառավարման մարմինները,
- պետական հիմնարկները,
- բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունները,
- հանրային նշանակության կազմակերպությունները,
- դրանց պաշտոնատար անձինք:

Ինչպես երևում է ՀՀ օրենսդրությամբ՝ այս ցանկում ընդգրկված են հանրությանը ծառայություններ մատուցող մասնավոր ընկերությունները: Սա խիստ կարևոր է և հզորացնում է ՏԱ մասին օրենքի ներգործությունը: Ավանդաբար տեղեկություն ստանալու իրավունքը կապվում է վերոնշյալ առաջին 4 կետերում ընդգրկված մարմիններից տեղեկություն ստանալու խնդրի հետ, քանի որ տեղեկատվության ազատությունը կոչված է ապահովելու պետական իշխանության թափանցիկությունը: Սակայն աստիճանաբար պետությունը հասարակական մի շարք կարևոր ոլորտերի (եներգետիկա, տրանսպորտ, կապ, ջրամատակարարում և այլն) շահագործումն ու կառավարումը փոխանցում է մասնավոր սեկտորին: Սրանով այս ոլորտներին առնչվող տեղեկատվությունն ամենևին չի կորցնում իր կարևորությունն ու անհրաժեշտությունը մարդկանց համար: Նշենք, որ շատ քիչ երկրների օրենքներ են այսքան ընդլայնել տեղեկատվություն տնօրինողների շրջանակը: Այսպիսով, տեղեկատվություն տնօրինող են համարվում իշխանության երեք՝ օրենսդիր, գործադիր և դատական ճյուղերը ներկայացնող ըստ էության բոլոր մարմիններն ու դրանց պաշտոնատար անձինք, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունները և ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում ստացող յուրաքանչյուր մասնավոր կառույց:


Նույն հոդվածով սահմանված է նաև հանրային նշանակության կազմակերպությունը. «հանրային նշանակության կազմակերպություն՝ ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող, ինչպես նաև առողջապահության, սպորտի, կրթության, մշակույթի, սոցիալական ապահովության, տրանսպորտի և կապի, կոմունալ ոլորտներում հանրությանը ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպություններ»:

50 մարմիններից ամենադրական արդյունքը ստացվել է Օշականի գյուղապետարանից, որն իրեն ուղղված 4 գրավոր և 1 բանավոր հարցմանը տվել է ժամանակին լիարժեք պատասխան:

Իսկ ամենաբացասական արդյունքը ցույց են տվել Ծավի և Այգեծորի գյուղապետարանները, «Կլիմիկական հիվանդանոց» ՓԲԸ և «Քեթրին գրուպ» ՍՊԸ-ն, որոնք իրենց ուղղված բոլոր 5-ական հարցումները թողել են անպատասխան:

Ինչպես երևում է աղյուսակ 3-ում ներկայացված արդյունքներից՝ մոնիտորինգում ընդգրկված 50 մարմիններից լավագույն արդյունքը ցույց են տվել մարզպետարանները, իսկ վատագույնը՝ հանրային նշանակության կազմակերպությունները: Մարզպետարաններն իրենց ուղղված 50 հարցումներից 74%-ին տվել են լիարժեք պատասխան՝ ժամանակին և ուշացած: Իսկ հանրային նշանակության կազմակերպություններն իրենց հասցեագրված 50 հարցումներից միայն 44%-ին են լիարժեք պատասխան տրամադրել:

Աղյուսակ 3. Արդյունքներն ըստ տեղեկատվություն տնօրինող մարմինների



Այսպիսով, յուրաքանչյուր խմբի լավագույն և վատագույն արդյունքները ներկայացվում են ստորև բերված աղյուսակներում:

1. Պետական կառավարման մարմիններ.

<p>Լավագույն արդյունք.</p> <ul style="list-style-type: none"> • ՀՀ Կրթության և գիտության նախարարություն 4 ժամանակին լիարժեք պատասխան, 1 չընդունված հարցում: • ՀՀ Արդարադատության նախարարություն 4 ժամանակին լիարժեք պատասխան, 1 չընդունված հարցում: 	<p>Վատագույն արդյունք.</p> <ul style="list-style-type: none"> • ՀՀ Ազգային ժողով 1 լուռ մերժում, 1 անհիմն մերժում, 1 թերի պատասխան, 2 ուշացած: • ՀՀ Ոստիկանություն 3 լուռ մերժում, 1 ուշացած, 1 չընդունված հարցում:
--	--

Այնուհետև.

- Առողջապահության նախարարություն - 3 ժամանակին լիարժեք պատասխան, 2 ուշացած լիարժեք պատասխան (<http://www.givemeinfo.am/hy/entity/9/>):

- **Բնապահպանության նախարարություն** - 2 ժամանակին լիարժեք պատասխան, 1 պատասխան հիմնավոր հղումով, 1 ուշացած և 1 լուռ մերժում (<http://www.givemeinfo.am/hy/entity/25/>):
- **Աշխատանքի պետական տեսչություն** - 2 ժամանակին լիարժեք պատասխան, 1 ուշացած, 1 թերի պատասխան և 1 չընդունված հարցում (<http://www.givemeinfo.am/hy/entity/164/>):
- **Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն** - 1 ժամանակին լիարժեք պատասխան, 2 ուշացած լիարժեք պատասխան, 1 օրինական մերժում և 1 լուռ մերժում (<http://www.givemeinfo.am/hy/entity/7/>):
- **ՀՀ Պետական եկամուտների կոմիտե** - 1 ժամանակին լիարժեք պատասխան, 1 պատասխան հիմնավոր հղումով, 1 անհիմն պատասխան, 1 լուռ մերժում և 1 չընդունված հարցում (<http://www.givemeinfo.am/hy/entity/60/>):
- **Սննդամթերքի անվտանգության և անասնաբուժական պետական տեսչություն** - 1 ժամանակին լիարժեք պատասխան, 1 անհիմն պատասխան, 2 լուռ մերժում և 1 չընդունված հարցում (<http://www.givemeinfo.am/hy/entity/163/>):

2. Մարզպետարաններ

Լավագույն արդյունք.	Վատագույն արդյունք.
<ul style="list-style-type: none"> ● Շիրակի մարզպետարան 4 ժամանակին լիարժեք պատասխան, 1` ուշացած լիարժեք: ● Սյունիքի մարզպետարան 4 ժամանակին լիարժեք պատասխան, 1` ուշացած լիարժեք: 	<ul style="list-style-type: none"> ● Վայոց Ձորի մարզպետարան 2 լուռ մերժում, 1 թերի, 2 ժամանակին լիարժեք պատասխան:

Դրական արդյունքներով հաջորդում են **Կոտայքը, Լոռին և Արագածոտնը`** 4-ական ժամանակին լիարժեք պատասխաններով և 1-ական լուռ մերժումներով: Նշենք, որ Կոտայքի, Լոռիի և Արագածոտնի մարզպետարաններն անպատասխան են թողել ուսանողի էլեկտրոնային հարցումները: Սակայն նրանց ցույց տված դրական արդյունքներից` ժամանակին լիարժեք պատասխաններ իրենց հասած չորսական հարցումներին, կարելի է եզրակացնել, որ ուսանողի հարցումը անպատասխան է թողնվել ոչ թե դիտավորությամբ, այլ որևէ տեխնիկական պատճառով:

Այնուհետև`

- **Արարատի մարզպետարան** - 2 ժամանակին և 1 ուշացած լիարժեք պատասխաններ, 2 լուռ մերժում (<http://www.givemeinfo.am/hy/entity/33/>):
- **Արմավիրի մարզպետարան** - 2 ժամանակին և 1 ուշացած լիարժեք պատասխաններ, 2 լուռ մերժում (<http://www.givemeinfo.am/hy/entity/34/>):
- **Գեղարքունիքի մարզպետարան** - 1 ժամանակին և 3 ուշացած լիարժեք պատասխաններ, 1 լուռ մերժում (<http://www.givemeinfo.am/hy/entity/35/>):
- **Տավուշի մարզպետարան** - 1 ժամանակին և 2 ուշացած լիարժեք պատասխաններ, 1 հիմնավոր հղումով պատասխան, և 1 լուռ մերժում (<http://www.givemeinfo.am/hy/entity/41/>):

Ինչպես նշվեց, դրական և բացասական արդյունքները ներկայացված են ըստ խմբերի: Սա նշանակում է, որ խմբում բացասական արդյունք ունեցած տեղեկատվություն տնօրինող մարմինը ընդհանուր 50 տեղեկատվություն տնօրինող մարմինների շրջանում կարող է դրական դիտվել: Օրինակ, Վայոց Ձորի մարզպետարանը 2 լիարժեք, 1 թերի պատասխաններով և 2 լուռ մերժումներով չնայած մարզպետարանների շրջանում բացասական արդյունք ունի, սակայն տեղեկատվություն տնօրինող բոլոր մարմինների հաշվարկով մարզպետարանն իրականում միջին արդյունք է ցույց տվել: Պետք է հաշվի առնել, որ մարզպետարանները բոլոր խումբ մարմիններից ամենադրական արդյունքն են ցույց տվել: Հետևաբար, լավագույնների շրջանում վատ արդյունք ցույց տված մարմինը բոլոր 50 մարմինների շրջանում փաստորեն միջին արդյունք ունի:

3. Քաղաքապետարաններ

Լավագույն արդյունք.	Վատագույն արդյունք.
<ul style="list-style-type: none"> Եղեգնաձորի քաղաքապետարան 4 ժամանակին լիարժեք պատասխան, 1՝ ուշացած լիարժեք: Ստեփանավանի քաղաքապետարան 4 ժամանակին լիարժեք պատասխան, 1՝ ուշացած լիարժեք: 	<ul style="list-style-type: none"> Աշտարակի քաղաքապետարան 3 լուռ մերժում, 1 ուշացած և 1 ժամանակին լիարժեք պատասխաններ:

Բացասական արդյունքներով առանձնանում են նաև **Իջևանի և** Գյումրիի քաղաքապետարանները: Իջևանի քաղաքապետարանը անպատասխան թողել է 1 հարցում, սակայն 2-ին տրամադրել է անհիմն պատասխան և միայն 1 հարցմանն է տվել լիարժեք պատասխան (<http://www.givemeinfo.am/hy/entity/95/>): 1 հարցման՝ բանավոր հարցման դեպքում էլ չի հաջողվել հեռախոսով կապվել քաղաքապետարանի հետ, ուստի այդ հարցումը համարվում է տեղեկատվություն տնօրինողին չհասած:

Գյումրիի քաղաքապետարանն էլ անպատասխան է թողել 2 հարցում, 1-ին տվել է անհիմն պատասխան, 1 հարցման պատասխանել է ուշացումով և միայն 1 հարցման դեպքում է պատասխանել ժամանակին լիարժեք (<http://www.givemeinfo.am/hy/entity/98/>):

Մյուս քաղաքապետարանների արդյունքները հետևյալն են.

- **ք. Արմավիր** - 3 ժամանակին և 2 լիարժեք ուշացած պատասխաններ (<http://www.givemeinfo.am/hy/entity/92/>):
- **ք. Զրազդան** - 4 լիարժեք ժամանակին պատասխան և 1 լուռ մերժում (<http://www.givemeinfo.am/hy/entity/91/>):
- **ք. Արտաշատ** - 2 ժամանակին և 2 ուշացած լիարժեք պատասխաններ և 1 լուռ մերժում (<http://www.givemeinfo.am/hy/entity/88/>):
- **ք. Կապան** - 3 ժամանակին և 2 ուշացած լիարժեք պատասխաններ և 1 լուռ մերժում (<http://www.givemeinfo.am/hy/entity/92/>):
- **ք. Գավառ** - 1 ժամանակին և 2 ուշացած լիարժեք պատասխաններ և 2 լուռ մերժում (<http://www.givemeinfo.am/hy/entity/96/>):

4. Գյուղապետարաններ

Լավագույն արդյունք.	Վատագույն արդյունք.
<ul style="list-style-type: none"> Օշականի գյուղապետարան 5 ժամանակին լիարժեք պատասխան: Ելփինի գյուղապետարան 4 ժամանակին լիարժեք պատասխան, 1՝ անհիմն պատասխան: 	<ul style="list-style-type: none"> Այգեձորի գյուղապետարան 5 լուռ մերժում: Ծավի գյուղապետարան 4 լուռ մերժում, 1 չընդունված հարցում:

Ելփինի գյուղապետարանը լիարժեք պատասխանել է 4 գրավոր հարցման, իսկ բանավոր հարցմանն ի պատասխան հայտնել, որ կարկուտի հետևանքով վնասվել են հեռախոսագծերը, և որ չի կարող խոսել հեռախոսով և, համապատասխանաբար՝ տրամադրել տեղեկություններ: Սա դիտարկվել է որպես անհիմն մերժում (<http://www.givemeinfo.am/hy/entity/77/>):

Ազատամի գյուղապետարանը նույնպես պատասխանել է 4 գրավոր հարցման, իսկ լրագրողի բանավոր հարցման դեպքում հեռախոսով խոստացել է հետադարձ զանգով տրամադրել խնդրվող տեղեկությունները, սակայն չի պատասխանել: Սա դիտարկվել է որպես լուռ մերժում (<http://www.givemeinfo.am/hy/entity/82/>):

Մոնիտորինգում ընդգրկված մյուս գյուղապետարանների արդյունքները հետևյալն են.

- **գ. Նոր Խարբերդ** - 2 լիարժեք ուշացած պատասխան և 3 լուռ մերժում (<http://www.givemeinfo.am/hy/entity/83/>):
- **գ. Գարգառ** - 2 լիարժեք ժամանակին, 1 թերի պատասխաններ, 1 լուռ մերժում և 1 չհասած հարցում (<http://www.givemeinfo.am/hy/entity/84/>):
- **գ. Վերին Պողոնի** - 1 ժամանակին և 1 ուշացած լիարժեք պատասխաններ, 2 լուռ մերժում և 1 չհասած հարցում (<http://www.givemeinfo.am/hy/entity/86/>):
- **գ. Լենուղի** - 1 ժամանակին և 1 ուշացած լիարժեք պատասխաններ, 3 լուռ մերժում (<http://www.givemeinfo.am/hy/entity/78/>):
- **գ. Լճաշեն** - 1 ժամանակին և 2 ուշացած լիարժեք պատասխաններ, 2 լուռ մերժում (<http://www.givemeinfo.am/hy/entity/81/>):

5. Հանրային նշանակության կազմակերպություններ

Լավագույն արդյունք.	Վատագույն արդյունք.
<ul style="list-style-type: none"> ● «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ 4 ժամանակին լիարժեք պատասխան: 1՝ ուշացած լիարժեք: ● «Հատուկ պոլիկլինիկա» ՓԲԸ 4 ժամանակին լիարժեք պատասխան, 1՝ ուշացած լիարժեք: 	<ul style="list-style-type: none"> ● «Կլինիկական հիվանդանոց» ՓԲԸ 5 լուռ մերժում: ● «Քեթրին Գրուպ» ՓԲԸ 5 լուռ մերժում:

Դրական է նաև **«Թիվ 15 պոլիկլինիկա» ՓԲԸ**-ի արդյունքներն այն տարբերությամբ, որ պոլիկլինիկական 5 հարցմանն էլ լիարժեք է պատասխանել, սակայն 3-ին՝ ժամկետների խախտմամբ (<http://www.givemeinfo.am/hy/entity/103/>):

Այնուհետև.

- **«Արմենիատելեֆոն կոմպանի» (ԱրմենՏել) ՓԲԸ** - 3 ժամանակին լիարժեք պատասխան, 1 լուռ մերժում և 1 չընդունված հարցում (<http://www.givemeinfo.am/hy/entity/109/>):
- **«ՀայրուսԳազԱրտ» ՓԲԸ** - 2 ժամանակին և 1 ուշացած լիարժեք պատասխաններ, 1 հիմնավոր հղում, 1 լուռ մերժում (<http://www.givemeinfo.am/hy/entity/105/>):
- **«ՀայՋրնուղ Կոյուղի» ՓԲԸ** - 2 հիմնավոր հղում, 2 լուռ մերժում և 1 չընդունված հարցում (<http://www.givemeinfo.am/hy/entity/106/>):
- **«Նաիրի» բժշկական կենտրոն ՓԲԸ** - 1 ժամանակին լիարժեք պատասխան, 4 լուռ մերժում (<http://www.givemeinfo.am/hy/entity/101/>):
- **«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ** - 1 հիմնավոր հղում և 4 լուռ մերժում (<http://www.givemeinfo.am/hy/entity/107/>):

Բ.5 Արդյունքներն ըստ դիմողների

Մոնիտորինգի ընթացքում վերլուծված հարցումներն ուղարկվել են 10 դիմողների կողմից՝ յուրաքանչյուրը 25-ական հարցում 25 տարբեր տեղեկություն տնօրինող մարմնի: Ստացված պատասխանների առումով լավագույնը Ինֆորմացիայի ազատության կենտրոնի և թոշակառուի արդյունքներն են. այս 2 դիմողների ուղարկած 25 հարցումներից 19-ին տրվել է լիարժեք պատասխան:

Հաջորդ ցուցանիշը լրագրողինն ու մանկավարժինն է: 25-ական հարցումներից լիարժեք պատասխանի են արժանացել համապատասխանաբար 18-ը և 17-ը: Նշենք, որ մանկավարժի ցուցանիշն ամենադրականն է ժամկետում ստացված լիարժեք պատասխանների առումով՝ 15 լիարժեք պատասխան, որոնք տրամադրվել են առանց ժամկետների խախտման:

Օրենսդրական կարգավորումը. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու իրավունք ունի յուրաքանչյուր անձ: Բացի այդ՝ օրենքի 9-րդ հոդվածը, սահմանելով հարցում ներկայացնելու և քննարկելու կարգը, հարցման մեջ նշվող պարտադիր տվյալներ է սահմանում ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց համար: Վերոնշյալ հոդվածներից բխում է, որ տեղեկություն ստանալու իրավունքը պատկանում է և ֆիզիկական և իրավաբանական անձանց:

Ամենաբացասական արդյունքը ուսանողինն է, ում հարցումներից միայն 8-ի դեպքում է ստացվել լիարժեք պատասխան: Ընդ որում, ուսանողի 13 հարցում մնացել է անպատասխան:


Հետաքրքրական է տեղեկատվության ազատության ոլորտում մասնագիտացած կազմակերպության՝ ԻԱԿ-ի, և տեղեկատվության ազատության իրավունքի ոլորտում չմասնագիտացած կազմակերպության համեմատությունը: Նախ նշենք, որ 2 կազմակերպություններն էլ տեղեկատվություն տնօրինողներին ներկայացրել են նույն տեսակի հարցեր՝ 2-ի դեպքում էլ հարցերը պարզ են եղել: Սակայն, արդյունքը տարբեր է. ժամկետանց տրամադրված պատասխանների տարբերությունը հետևյալն է՝ 3 լիարժեք ժամկետանց պատասխան ունի ՏԱ ոլորտում չմասնագիտացած ՀԿ-ն, իսկ ԻԱԿ-ը՝ 6 այդպիսի պատասխան: Պատկերը նույնն է ժամանակին տրամադրված լիարժեք պատասխանների դեպքում. ԻԱԿ-ին տրամադրվել է 13 պատասխան, իսկ մյուս ՀԿ-ին 11 պատասխան: ԻԱԿ-ի դեպքում թերի պատասխան, ինչպես նաև որևէ մերժում չի արձանագրվել, այնինչ մյուս ՀԿ-ի դեպքում տրամադրվել է 1 ոչ լիարժեք պատասխան, 1 դեպքում էլ տեղեկատվության տրամադրումն անհիմն մերժվել է:

Պարզ հարցով դիմած մանկավարժը ժամկետում լիարժեք 15 պատասխան է ստացել՝ իրավաբանից 2 անգամ ավել: Փոխարենը, մանկավարժի ժամկետանց պատասխանները 2-ն են՝ իրավաբանի 6 ժամկետանց լիարժեք պատասխանի դիմաց: Միակ էական տարբերությունն այն է, որ մանկավարժը միայն 1 թերի պատասխան է ստացել, այնինչ իրավաբանը 2 անհիմն մերժում և 1 թերի պատասխան ունի:

Տարբեր դիմողներին տարբեր կերպ պատասխանելու առումով ամենավատ արդյունքը Ազգային ժողովինն է, որը լրագրողի և իրավաբանի հարցումներին տրամադրել է ուշացած պատասխան, հաշմանդամի հարցմանը տվել է թերի պատասխան, ուսանողի հարցումն անհիմն մերժել է, իսկ «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ-ի հարցմանն ընդհանրապես չի պատասխանել: Սակայն, որ տեղեկատվության տրամադրման համար դիմողների հանդեպ հաճախ խտրական վերաբերմունք է դրսևորվում: Նմանատիպ օրինակ է նաև այն, որ Ինֆորմացիայի ազատության կենտրոնին և լրագրողին տեղեկություն տնօրինող մարմիններն ամենաշատն են տրամադրել լիարժեք պատասխաններ՝ համապատասխանաբար 19 և 18 լիարժեք պատասխան: Սակայն, օրինակ ուսանողների ստացած լիարժեք պատասխանները 2 անգամ զիջում են ԻԱԿ-ի և լրագրողի ստացած լիարժեք պատասխաններին. ուսանողներից մեկը ստացել է 8, մյուսը 9 լիարժեք պատասխան:

Ներկայացված աղյուսակում հստակ պատկերված է, թե 10 դիմողների կողմից ուղարկված 25-ական հարցումներն ինչ պատասխաններ են ստացել:

Աղյուսակ 4. Մոնիտորինգի արդյունքներն ըստ դիմողների



Բ.6 Արդյունքներն ըստ տեղեկություն ստանալու հարցման ձևերի և տեսակների

ա. գրավոր, բանավոր, էլեկտրոնային հարցումներ.

Օրենսդրական կարգավորումը. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը հնարավորություն է տալիս տեղեկատվություն տնօրինողին դիմել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր հարցումներով: Գրավոր և բանավոր հարցումներ ներկայացնելու և քննարկելու կարգը սահմանվում է ՏԱ մասին օրենքի 9-րդ հոդվածով:

Նշենք, որ գործնականում նախընտրելի է տեղեկություն ստանալու հարցման գրավոր տարբերակը, ինչի դեպքում խախտված իրավունքի վերականգնման հնարավորությունները մեծանում են, քանի որ գրավոր հարցումը փոստով ուղարկելու դեպքում տրվում է փոստային անդորրագիր, որում նշված է նաև հարցումն ուղարկելու ամսաթիվը, իսկ առձեռն ներկայացված հարցման դեպքում տեղեկատվություն տնօրինողի կողմից հարցման 2-րդ օրինակի վրա կատարվում է համապատասխան մակնշում այն ստանալու վերաբերյալ և նշվում է հարցումը ստանալու ամսաթիվը: Փոստի անդորրագիրը և տեղեկատվություն տնօրինողի աշխատակցի ստորագրությամբ հարցման 2-րդ օրինակը նախ վկայում են, որ հարցումն իսկապես ներկայացվել է, բացի այդ, անդորրագրի և հարցման 2-րդ օրինակի վրա նշված ամսաթիվը ցույց է տալիս, թե երբ է հարցումը ներկայացվել՝ բացառելով պատասխանի տրամադրման ժամկետների կանայական ձգձգումը:

Օրենքը տեղեկություն ստանալու գրավոր և բանավոր հարցմանը մի քանի պահանջներ է ներկայացնում. գրավոր հարցումը պետք է ստորագրված լինի և պարունակի դիմողի անունը, ազգանունը, քաղաքացիությունը, բնակության կամ աշխատանքի կամ ուսումնական հաստատության հասցեն (իրավաբանական անձի դեպքում՝ նրա անվանումը, գտնվելու վայրը):

Բանավոր հարցմամբ դիմողը պարտավոր է նախապես հայտնել իր անունը և ազգանունը:

Հարցումին ներկայացվող՝ վերը նշված պահանջները չբավարարելու դեպքում հարցումը կարող է վերացվել կամ դրան ընդհանրապես ընթացք չի տրվի: Գրավոր անստորագիր հարցումը ենթակա է ոչնչացման:

Մոնիտորինգի ընթացքում ուղարկված 250 հարցումներից 173-ը գրավոր հարցումներ են, 37-ը՝ էլեկտրոնային, 40-ը՝ բանավոր:

Գրավոր հարցումներ. Բոլոր 173 գրավոր հարցումներն ուղարկվել են փոստով, պատվիրված նամակով: Գրավոր բոլոր հարցումների պատասխանները ստացվել են գրավոր, բացառությամբ մեկ դեպքի. մանկավարժի՝ փոստով ուղարկված հարցմանը Վայոց Ձորի մարզպետարանը պատասխանել է էլեկտրոնային նամակով: Հարցումն ուղարկելուց 21 օր անց մարզպետարանը մանկավարժի էլեկտրոնային հասցեին ուղարկել է պատասխան՝ հայտնելով, որ խնդրվող տեղեկությունը կարելի է ստանալ vdzor.region.am կայքից: Հատկանշական է, որ նախ էլեկտրոնային պատասխանը եկել է ոչ թե մարզպետարանի պաշտոնական էլեկտրոնային հասցեից, այլ մարզպետարանի աշխատակցի անձնական էլեկտրոնային հասցեից, բացի այդ՝ նամակին կցված փաստաթուղթը ներառում էր միայն մեկ տող՝ «Ձեզ անհրաժեշտ ինֆորմացիան կարող եք ստանալ vdzor.region.am հասցեով», առանց բլանկ և առանց ստորագրության (<http://www.givemeinfo.am/hy/case/156/>):

Էլեկտրոնային հարցումներ: Այսօր արդեն գործնականում հանդիպող կարևոր հարցերից է նաև էլեկտրոնային ճանապարհով (ինտերնետային ցանցով) ստացված հարցումներին ընթացք տալու հարցը: Թեև «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը ուղղակիորեն չի նախատեսում էլեկտրոնային հարցումը, սակայն օրենքի մի շարք հոդվածներ անուղղակիորեն հաստատում են էլեկտրոնային հարցման և էլեկտրոնային տարբերակով տեղեկատվության ստացման հնարավորությունը: Այսպես, օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասին համաձայն՝ տեղեկություն են համարվում նաև էլեկտրոնային փաստաթղթերը: Իսկ 10-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն տեղեկատվության տրա-

մադրման համար գանձում չի կատարվում տեղեկությունն էլեկտրոնային փոստով տրամադրելիս. այսինքն, օրենքով նախատեսվում է Ինտերնետի միջոցով տեղեկության տրամադրման հնարավորություն:

Այսպես, այս մոնիտորինգի ընթացքում ուղարկվել է 37 էլեկտրոնային հարցում, որոնցից.


- 8-ը ստացել է ժամանակին լիարժեք պատասխան,
- 5-ը՝ ուշացած լիարժեք պատասխան,
- 24-ը մնացել է անպատասխան (լուռ մերժում):

էլեկտրոնային հարցումներից միայն մեկի դեպքում հարցման պատասխանը ստացվել է փոստով ուղարկված գրավոր գրությամբ: Ուսանողն իր անձնական էլեկտրոնային փոստով հարցում է ուղարկել Շիրակի մարզպետարանի shirak@mta.gov.am էլ հասցեին, սակայն պատասխանը տրամադրվել է գրավոր՝ փոստով՝ հարցումն ուղարկելուց 7 օր անց (<http://www.givemeinfo.am/hy/case/215/>):

Քանավոր հարցումներ. Մոնիտորինգի 250 հարցումներից 40-ը բանավոր հարցումներն են, որոնց պատասխանների արդյունքներն են.

- 13 ժամանակին լիարժեք պատասխան,
- 1 հիմնավոր մերժում,
- 2 անհիմն մերժում,
- 4 հիմնավոր հղում, ընդ որում՝ բոլոր դեպքերում հղում է արվել հարցման գրավոր ձևին,
- 6 լուռ մերժում. դրանք այն հարցումներն են, որոնց դեպքում դիմողը հեռախոսով կապվել է տեղեկատվություն տնօրինողին, տեղեկատվություն տնօրինողը խոստացել է հետադարձ զանգով պատասխանել, սակայն չի պատասխանել,
- 14 չընդունված հարցում. սրանք այն հարցումներն են, երբ հնարավոր չի եղել կապվել տեղեկություն տնօրինողի հետ: Օրինակ՝ լրագրողը տեղեկություն ստանալու համար փորձել է կապվել Այգեծորի գյուղապետարան, սակայն գյուղապետարանի՝ տեղեկատվություն նշված հեռախոսահամարն ամբողջ օրվա ընթացքում չի պատասխանել: Այսպիսի դեպքերում հարցումը համարվել է տեղեկատվություն տնօրինողին չհասած կամ չընդունված:

Աղյուսակ 5. Արդյունքներն ըստ հարցման ձևի*




*«Լիարժեք» են համարվում ժամանակին և ուշացած ամբողջական տեղեկատվություն պարունակող պատասխանները:

բ. հարցերի տեսակները.

Մոնիտորինգում ընդգրկված 250 տեղեկություն ստանալու հարցումները ներառել են պարզ և բարդ/զգայուն հարցեր: Պարզ են այն հարցերը, որոնց պատասխանը պետք է պատրաստ և հասանելի լինի տվյալ գերատեսչությունում: Բարդ հարցերի պատասխանի տրամադրումը պահանջում է հավելյալ աշխատանք: Բարդ հարցի հետ համատեղ դիտարկվում են նաև զգայուն հարցերը, որոնց տեղեկություն տնօրինող մարմինը չի ցանկանա պատասխանել՝ կախված պատասխանի հնարավոր սուբյեկտիվ ազդեցությունից: Ստորև ներկայացված աղյուսակում երևում է պատասխանների արդյունքներն ըստ հարցերի տեսակների:

Աղյուսակ 6. Արդյունքներն ըստ հարցերի տեսակների



Լիարժեք պատասխան է տրամադրվել պարզ հարցումներից 67.9%-ի դեպքում, իսկ բարդ/զգայուն հարցումներին լիարժեք ժամանակին պատասխան է տրվել 50.7%-ին: Տարբերություն է նկատվում նաև չպատասխանված պարզ և բարդ/զգայուն հարցումների համեմատության արդյունքում: Պարզ հարցումներից անպատասխան է մնացել 22.6%-ը, իսկ բարդից՝ 33.3%: Այսպիսով.

Պարզ հարցերով 75 հարցումներից.

- 67.9%-ը ստացել է լիարժեք պատասխան, որից 53.3%-ը (40 պատասխան) ժամանակին պատասխան է, իսկ 14.6%-ը՝ (11 պատասխան) ուշացած,
- 2.6% (2 պատասխան) հիմնավոր պատասխան է հղումով,
- 2.6% (2 պատասխան) թերի է,
- 2.6% (2 պատասխան)՝ անհիմն մերժում,
- 22.6% (17 պատասխան)՝ լուռ մերժում,
- 1.3% (1 հարցում) չընդունված հարցում է:

Բարդ հարցերով 175 հարցումներից

- 50.7% ստացել է լիարժեք պատասխան, որից 34.2% (60 պատասխան) ժամանակին է, իսկ 16.5% (29 պատասխան)՝ ուշացած,
- 0.5% (1 պատասխան)՝ օրինական մերժում,
- 4% (7 պատասխան) հիմնավոր պատասխան հղումով է,
- 1.1% (2 պատասխան) թերի պատասխան,
- 2.8 % (5 պատասխան)՝ անհիմն մերժում,
- 33.3% (58 պատասխան)՝ լուռ մերժում,
- 7% (13 հարցում) չընդունված հարցումներ են:

Այսպիսով, տեղեկատվության տրամադրման գործընթացում որոշիչ դեր է խաղում նաև հարցման տեսակը՝ որքանով այն զգայուն խնդիր է պարունակում տեղեկատվություն տնօրինողի համար: Վերջիններս առավել հակված են դրական ընթացք տալ պարզ և իրենց համար խնդիրներ չառաջացնող հարցումներին:

Եզրահանգումներ

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից իրականացված այս մոնիտորինգի արդյունքում տեղեկատվություն տնօրինող 50 մարմինների ուղարկվել է տեղեկատվություն ստանալու 250 հարցում: Ուղարկվել են գրավոր, էլեկտրոնային և բանավոր հարցումներ տարբեր դիմողների կողմից՝ հասարակական կազմակերպություններ, լրագրողներ, թոշակառու, հաշմանդամ, ուսանողներ, մանկավարժ և իրավաբան: Հարցումները ներառել են պարզ և բարդ/զգայուն հարցեր: Հարցերն ընտրելիս բացառվել են վիճելի տեղեկություն (տվյալ տեղեկությունը գաղտնիք է, թե՛ ոչ, տրամադրման ենթակա է, թե ոչ՝ օրինակ՝ պաշտոնյայի անձին վերաբերող տեղեկություններ) պահանջող հարցերը: Շուրջ 8 տարի է՝ գործում է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը, սակայն տեղեկատվության ազատության կիրառման պրակտիկան Հայաստանում դեռևս բավարար մակարդակի վրա չէ: Այս մոնիտորինգը հնարավորություն տվեց փաստելու, որ տեղեկատվության ազատության ոլորտում առկա հիմնախնդիրները բազմաթիվ են ու բազմաբնույթ:

1. Հրապարակայնության մշակույթի բացակայություն

Այսպես, հիմնախնդիրներից առաջինը կարելի է նշել պաշտոնյաներից շատերի մոտ բաց աշխատելու մշակույթի բացակայությունը կամ որոշ դեպքերում՝ ոչ բավարար մակարդակի լինելը: Նրանց մեծ մասը դեռևս սովոր չէ պարտադիր արձագանքել հասարակության պահանջներին և տեղեկատվություն տալը չի ընկալում որպես իր հիմնական պարտականություններից մեկը:

2. Լիարժեք պատասխանների ապահովումը և մերժումներ

Մոնիտորինգի արդյունքում ուղարկված 250 հարցումներից 75-ը՝ 30%, մնացել է անպատասխան: Այս ցուցանիշը վկայում է, որ եթե տեղեկատվություն տնօրինող մարմինները չեն ուզում պատասխանել հարցմանը, ապա ոչ թե մերժում են գրավոր՝ ինչպես պահանջում է Օրենքը, այլ պարզապես անպատասխան են թողնում հարցումը: Սրանից էլ բխում է լուռ մերժումների մեծ և գրավոր մերժումների փոքր թիվը՝ 7 մերժում (2.8%):

Թեև անհիմն մերժումները համեմատաբար մեծ թիվ չեն կազմում, սակայն դեռևս որպես մերժման հիմք է ծառայում կառավարության կողմից տեղեկություն տրամադրելու կարգը չընդունելը, ինչը շահարկվում է այն պաշտոնյաների կողմից, ովքեր չեն ցանկանում տրամադրել պահանջվող տեղեկատվությունը: Այդպես, այս մոնիտորինգի ընթացքում ՀՀ Պետական եկամուտների կոմիտեն մերժել էր պատասխանել իրավաբանի գրավոր հարցմանը, որով իրավաբանը խնդրել էր տեղեկություններ կոմիտեի դեմ 2010թ.-ին տեղի ունեցած դատական գործերի վերաբերյալ: Որպես մերժման հիմք ՀՀ Պետական եկամուտների կոմիտեն նշել էր, որ ՀՀ կառավարության կողմից սահմանված չէ տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման կարգը, ուստի, կոմիտեն չի կարող տրամադրել խնդրված տեղեկությունները:

3. Ժամկետներ

Լրջագույն խնդիրներից է օրենքով սահմանված ժամկետների խախտումը: Մոնիտորինգի արդյունքները ցույց տվեցին, որ պատասխան ստացած 161 հարցումներից 70.2%-է (113 պատասխան) միայն պատասխան ստացել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետում, իսկ 29.8%-ին (46 պատասխան) պատասխանվել է ուշացումով: Հարցումներին պատասխանելու միջին ժամկետը 11-12 օր է:

Հարցումների վերլուծությունը ցույց տվեց, որ տեղեկությունների տրամադրման համար օրենքով սահմանված 5-օրյա ժամկետը իրատեսական է, և ցանկության դեպքում հեշտությամբ կարելի է պատասխան տալ հենց այս ժամկետում: Եվ հակառակը. եթե մարմինը և դրա ղեկավարությունը չունեն քաղաքական կամք և համապատասխան գիտելիք, միևնույն է տեղեկությունների տրամադրումն առանց հիմնավորման ուշանում է, պատասխանները լինում են թերի, կամ պարզապես հարցումներն անտեսվում են՝ դրանց պատասխանելը համարելով ոչ թե պարտականություն, այլ՝ հավելյալ աշխատանք:

Արդիական է նաև լրացուցիչ աշխատանք և ժամանակ պահանջող պատասխանի ուշացումը հիմնավորելու խնդիրը: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինող մարմինը պարտավոր է պատասխանի հետաձգման մասին 5-օրյա ժամկետում գրավոր տեղեկացնել դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները և տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը: Մոնիտորինգը ցույց տվեց, որ օրենքի այս պահանջը չի կատարվում: Մոնիտորինգի ընթացքում միայն մեկ դեպքում ՀՀ Արդարադատության նախարարությունն է պատասխան ԻԱԿ-ի հարցմանը միջանկյալ էլեկտրոնային գրությամբ նշել է, որ պատասխանը կտրամադրվի 30-օրյա ժամկետում, քանի որ անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք (<http://www.givemeinfo.am/hy/case/74/>): Եվ բոլոր ուշացած պատասխանների դեպքում պատասխանների ժամկետները խախտվել են առանց համապատասխան հիմնավորման:

4. Դիմողների հանդեպ խտրական վերաբերմունք

Մոնիտորինգի արդյունքները ցույց տվեցին նաև, որ տեղեկատվություն տնօրինող մարմինների կողմից տարբեր դիմողների հանդեպ դրսևորվում է խտրական վերաբերմունք տեղեկատվություն տրամադրելու գործընթացում: Օրինակ՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոնին և լրագրողին տեղեկություն տնօրինող մարմիններն ամենաշատն են տրամադրել լիարժեք պատասխաններ՝ համապատասխանաբար 19 և 18 լիարժեք պատասխան: Սակայն, օրինակ ուսանողների ստացած լիարժեք պատասխանները 2 անգամ զիջում են ԻԱԿ-ի և լրագրողի ստացած լիարժեք պատասխաններին. ուսանողներից մեկը ստացել է 8, մյուսը 9 լիարժեք պատասխան (*տես՝ Բաժին Բ.5, էջ՝ 25*):

5. Հարցման ձևերը և տեսակները

Մոնիտորինգը ներկայացրեց նաև գրավոր, էլեկտրոնային և բանավոր հարցումներին պատասխանելու պրակտիկան: Ակնհայտ է, որ գրավոր, փոստով ուղարկված հարցումներն են ստացել ամենաշատ լիարժեք պատասխանները, իսկ էլեկտրոնային և բանավոր հարցումների դեպքում դեռևս առկա են խնդիրներ: Այսպես, գրավոր ուղարկված 173 հարցումների 65.3%-ին (114 լիարժեք ժամանակին և ուշացած պատասխան) տրվել է լիարժեք պատասխան, այնինչ 37 էլեկտրոնային հարցումների միայն 35.0% է ստացել լիարժեք պատասխան (13 լիարժեք ժամանակին և ուշացած պատասխան): Այս ցուցանիշը ցույց է տալիս, որ տեղեկատվություն տնօրինող շատ մարմիններ դեռևս չեն յուրացրել նոր տեխնոլոգիաները իրենց աշխատանքում և չեն կարողանում դրանք օգտագործել մասնավորապես տեղեկատվության ազատության ոլորտում առավել արդյունավետ աշխատելու համար: Խնդրահարույց են նաև բանավոր հարցումները, քանի որ վերջիններիս 35%-ը (14 հարցում) չի հասել տեղեկություն տնօրինողին, այսինքն, դիմողը հեռախոսով չի կարողացել կապվել համապատասխան պաշտոնյային վերջինիս անհասանելիության պատճառով:

Նշենք նաև, որ մոնիտորինգի ընթացքում էլեկտրոնային հարցումներ չեն ուղարկվել գյուղապետարաններին, քանի որ դրանց մեծամասնությունը չունի պաշտոնական էլեկտրոնային հասցե:

Մոնիտորինգի ընթացքում ուղարկված 250 հարցումներից 75 ընդգրկել են պարզ հարցեր, իսկ 175-ը՝ բարդ/զգայուն հարցեր: Լիարժեք պատասխան է տրամադրվել պարզ հարցումներից 67.9%-ի դեպքում, իսկ բարդ/զգայուն հարցումներին լիարժեք պատասխան է տրվել միայն 50.7%-ին: Չգալի է նաև չպատասխանված պարզ և բարդ/զգայուն հարցումների համեմատության արդյունքը: Պարզ հարցումներից անպատասխան է մնացել 22.6%-ը, իսկ բարդից՝ 33.3%: Ակնհայտ է, որ տեղեկատվության տրամադրման գործընթացում որոշիչ դեր է խաղում նաև հարցման տեսակը՝ որքանով այն զգայուն խնդիր է պարունակում տեղեկատվություն տնօրինողի համար: Վերջիններս առավել հակված են դրական ընթացք տալ պարզ և իրենց համար խնդիրներ չառաջացնող հարցումներին:

6. Տեղեկություն տնօրինողները

Մոնիտորինգի արդյունքները ցույց տվեցին, որ մոնիտորինգում ընդգրկված 50 մարմիններից լավագույն արդյունքը ցույց են տվել մարզպետարանները, իսկ վատագույնը՝ հանրային նշանակության կազմակերպությունները: Մարզպետարաններն իրենց ուղղված 50 հարցումների 74%-ին են տվել լիարժեք պատասխան, իսկ հանրային նշանակության կազմակերպություններն իրենց հասցեագրված 50 հարցումների միայն 44%-ին են լիարժեք պատասխան տրամադրել, նույնքանն էլ թողել անպատասխան:

Հարկ է նշել, որ մարզպետարանների արձանագրած լավ ցուցանիշը պայմանավորված է նաև այն փաստով, որ մարզպետարանների ներկայացուցիչները բազմիցս մասնակցել են Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կազմակերպած SU ուսուցումներին:

Ամեն դեպքում, արձանագրելով տեղեկատվության ազատության ոլորտում առկա հիմնական խնդիրները, հարկ է նաև նշել, որ տեղեկատվության ազատության իրավունքը վերջին մի քանի տարիների ընթացքում առաջընթաց է ապրել: Տեղեկատվության ազատության իրավունքը ամրապնդվել է հայաստանյան քաղաքացիական հասարակության շրջանակներում և արդեն մուտք է գործել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ՝ նպաստելով բաց և հրապարակային կառավարմանը և թափանցիկ աշխատանքին:

Այս մոնիտորինգի ամենադրական արդյունքներից է այն, որ նախորդ տարիների համեմատ ավելացել է լիարժեք պատասխան ստացած հարցումների թիվը՝ 56%: Անհամեմատ քչացել են մերժումները՝ մոնիտորինգի արդյունքում կազմելով ընդամենը 3.2% (*տես՝ Բաժին Բ.1, էջ 13*), ինչը նույնպես դրական երևույթ է:

Հակիրճ ներկայացնենք նախորդ տարիների և այս մոնիտորինգի համեմատական արդյունքները.

- լիարժեք պատասխան ստացած հարցումների թիվը 2003թ.-ին եղել է 41%, 2004-ին՝ 51%, 2011-ին՝ 56%,
- մերժումները 2003թ.-ին կազմել են 16%, իսկ 2004-ին 5%, 2011-ին՝ 3.2%,
- չընդունված կամ հասցեատերերին չհասած հարցումները 2003թ.-ին կազմել են 15%, իսկ 2004-ին ընդամենը 1%, իսկ 2011-ին՝ 5.6%:
- 2003թ.-ին անպատասխան է մնացել հարցումների 28%-ը, իսկ 2004թ.-ին լուրջ մերժումների թիվն արդեն կազմել է 36%, 2011-ին՝ 30%:

Առաջարկություններ

Լերկայացված մոնիտորինգի արդյունքների վերլուծության վրա հիմնվելով, ինչպես նաև վերջին մի քանի տարիների՝ տեղեկատվության ազատության իրավունքի կիրառման պրակտիկայի խնդիրները հաշվի առնելով՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոնը ներկայացնում է առաջարկություններ ուղղված.

1. պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին,
2. հանրային նշանակության կազմակերպություններին,
3. լրատվամիջոցներին, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին և հանրությանը:

1. Առաջարկություններ ուղղված պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին

1.1 Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում թափանցիկության ապահովման և հրապարակայնության բարձրացման կարևորագույն նախադրյալը տեղեկություն տնօրինող մարմնի աշխատակիցների համապատասխան պատրաստվածությունն է: Այս առումով ԻԱԿ-ն առաջարկում է պարբերաբար իրականացնել տեղեկատվության ազատության թեմայով վերապատրաստումներ, աշխատանքային քննարկումների ժամանակ անդրադառնալ տեղեկատվության ազատության իրավունքին, ինչպես նաև «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթներին: Սա կօգնի, որպեսզի տեղեկություն տնօրինող պաշտոնյան կարողանա իր ստացած հարցումներին պատշաճ ընթացք և պատասխան տալ: Հարկավոր է, որ պետական մարմինների անձնակազմն ամբողջությամբ՝ ներառյալ ընդունարանների, անվտանգության և անցագրային կետերի աշխատակիցները պատկերացում ունենան տեղեկատվության ազատության իրավունքի և ՏԱ մասին օրենքի վերաբերյալ, քանի որ հաճախ հարցում ներկայացնող քաղաքացիների առաջին շփումը հենց այդ աշխատակիցների հետ է:

1.2 Տարբեր դիմողների հանդեպ խտրական վերաբերմունքը պետք է բացառվի: Պետական մարմինը յուրաքանչյուր պաշտոնյայի պետք է հասցնի տեղեկատվության ազատության ոլորտում խտրականության բացառման պահանջը և նախազգուշացնի տեղեկատվության տրամադրումն ապօրինաբար մերժելու դեպքում պատասխանատվության անխուսափելիության մասին:

1.3 ՏԱ հարցումներին պետք է տրվեն լիարժեք պատասխաններ: Լիարժեք պատասխաններ տրամադրելու խնդիրը լուծելու համար ԻԱԿ-ն առաջարկում է գերատեսչությունների ղեկավարներին տվյալ մարմնի բաժինների և/կամ վարչությունների ղեկավարներին տալ հանձնարարականներ, որպեսզի վերջիններս իրականացնեն իրենց բաժինների աշխատակիցների կողմից կազմված պատասխան գրությունների լիարժեքության և պատշաճության անընդհատ ստուգում և վերահսկողություն: Սա կբացառի ենթակաների անփույթ վերաբերմունքը կամ անուշադրության արդյունքում թերի և ոչ լիարժեք պատասխանների տրամադրումը: Վերահսկողական նման գործառույթը դրական կանդրադառնա նաև հարցումներին պատասխանելու ժամկետների վրա:

1.4 ՏԱ ոչ մի հարցում չպետք է անպատասխան մնա: Հաշվի առնելով այս մոնիտորինգով արձանագրված լուռ մերժումների (անպատասխան մնացած հարցումներ) մեծ թիվը՝ իշխանությունները պետք է ապահովեն, որ տեղեկություն ստանալու բոլոր հարցումները պատասխան ստանան Օրենքով սահմանված կարգով:

Պատասխանների պատշաճության, ինչպես նաև ժամկետների պահպանման ապահովման դրական քայլ կլինի նաև այն, որ այն դեպքերում, երբ տեղեկության տրամադրումը լրացուցիչ աշխատանք և ժամանակ է պահանջում, դիմողին պարտադիր ներկայացվի միջանկյալ գրություն՝ պատասխանի հետաձգման պատճառների և տրամադրման վերջնաժամկետի մասին: Սա ՏԱ մասին ՀՀ օրենքի պահանջ է, որը շատ հաճախ չի կիրառվում: Ուստի, անհրաժեշտ է, որպեսզի պետական կառավարման մարմինների ղեկավարներն ուշադրություն դարձնեն նաև այս խնդրի վրա:

1.5 Մերժումները պետք է լինեն հիմնավորված, և պատճառաբանված մերժումը պարտադիր պետք է ներկայացվի գրավոր:

1.6 ՏՄ հարցումները պետք է ստանան ժամանակին պատասխան: Տեղեկատվության տրամադրումը հետաձգելու պարագայում պետք է դիմողին 5-օրյա ժամկետում տեղյակ պահել հետաձգման պատճառների մասին: Խնդրի լուծման միջոցներից է նոր տեխնոլոգիաների, մասնավորապես էլեկտրոնային տարբերակով տեղեկատվության տրամադրման պրակտիկայի ներմուծումը տեղեկատվություն տնօրինող մարմիններում: Էլեկտրոնային տարբերակով հարցում ստանալու և դրանց պատասխանելու խնդիրն առավել արդիական է գյուղական համայնքներում, որոնցից շատերը չունեն անգամ էլեկտրոնային հասցե, որոշներում չկա անգամ համակարգիչ: Այսօր Հայաստանում գործող ինտերնետային մատակարարները հնարավորություն են տալիս ըստ էության բոլոր մարզերի գյուղական համայնքներում ցանկության դեպքում ունենալ հասանելի ինտերնետ, ուստի, Ինֆորմացիայի ազատության կենտրոնը հատկապես գյուղական համայնքներին առաջարկում է համայնքային բյուջեից կատարել հատկացումներ գյուղապետարաններում ինտերնետով ապահովված համակարգիչ տեղադրելու ուղղությամբ, որը կծառայի բացառապես տեղեկատվություն տրամադրելուն, հրապարակայնության ապահովմանը: Այն պարագայում, երբ քաղաքացիներն օգտվում են նոր տեխնոլոգիաների հնարավորություններից, ակնհայտ է, որ տեղական ինքնակառավարման մարմնի համար դա չի կարող ֆինանսական էական բեռ լինել, և այդ ոչ մեծ ներդրման և ՏՄ ոլորտում ինտերնետի կիրառման արդյունքում էականորեն կբարձրանա տեղեկատվության ազատության իրավունքի կիրառման մակարդակը:

1.7 Տեղեկատվության ազատության իրավունքի կիրառման պրակտիկան ցույց է տալիս, որ շատ մարմիններ չունեն տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձ: Որոշ մարմիններում տեղեկատվության ազատության ոլորտի պարտականությունները և գործառույթները դրված են տվյալ մարմնի մանուլի քարտուղարի վրա, որոշ դեպքերում էլ հասարակայնության հետ կապերի և/կամ լրատվության բաժնի կամ վարչության վրա: Սակայն ոչ բոլոր դեպքերում են վերոնշյալ պաշտոններն ամբողջությամբ ներառում տեղեկատվության ազատության ոլորտը, արդյունքում ՏՄ հարցումները ստանալու և դրանց պատասխանելու, սեփական նախաձեռնությամբ հրապարակման ենթակա տեղեկատվությունը հրապարակելու գործառույթները մնում են չհամակարգված, ինչի հետևանքով, մասնավորապես, ավելանում են ժամկետների խախտումները: ԻԱԿ-ը առաջարկում է տեղեկատվություն տնօրինող մարմինների ղեկավարներին նախաձեռնել տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնյայի հաստիք կամ տեղեկատվության ազատության ոլորտի գործառույթներն ամբողջությամբ դնել որևէ պաշտոնյայի վրա և հստակ սահմանել այդ ոլորտում նրա իրավունքների և պարտականությունների շրջանակը՝ տալով նաև տարբեր բաժինների և վարչությունների կողմից տրամադրվող տեղեկատվության պատշաճության նկատմամբ վերահսկողական լիազորություն:

1.8 Տեղեկատվության ազատության իրավունքի կիրառման ոլորտում շատ կարևոր է տեղեկատվության հրապարակումը տեղեկատվություն տնօրինող մարմնի նախաձեռնությամբ: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը սահմանում է մի շարք տեղեկությունների պարտադիր հրապարակում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, ինչպիսիք են բյուջեն, բյուջեի կատարման հաշվետվությունը, թափուր աշխատատեղերը, պաշտոնատար անձանց կոնտակտային տվյալները և այլն: Այս, ինչպես նաև տվյալ մարմնի տնօրինության տակ գտնվող այլ տեղեկությունները սեփական նախաձեռնությամբ հրապարակելն էականորեն կնպաստի տեղեկատվության ազատության իրավունքի կիրարկմանը, կբարձրացնի այս ոլորտում տվյալ մարմնի հեղինակությունը և կքչացնի քաղաքացիների կողմից տվյալ մարմնին հասցեագրված ՏՄ հարցումների թիվը: Այսինքն, մեկ անգամ հրապարակելով առկա ողջ տեղեկությունները, պետական մարմինը մի կողմից նվազեցնում է ՏՄ հարցումների ծավալը և համապատասխանաբար՝ դրանց պատասխանելու վրա ծախսվող ժամանակը, միջոցները և աշխատանքը, մյուս կողմից դառնում է թափանցիկ և հրապարակային գործող մարմին՝ վաստակելով հասարակության վստահությունը: Սակայն, որևէ տեղեկություն հրապարակելը դեռևս չի ազատում պաշտոնյային տեղեկություն տրամադրելու պարտականությունից: Այն դեպքերում, երբ խնդրվող տեղեկությունը հրապարակված է օրինակ էլեկտրոնային տարբերակով, իսկ դիմողն այնպիսի քաղաքացի է, որը չունի ինտերնետից օգտվելու հնարավորություն, ապա հղում անելը էլեկտրոնային կայքին պատշաճ պատասխան չէ: Հրապարակված տեղեկությանը հղում անելը չպետք է պաշտոնյայի համար ինքնանպատակ դառնա, այլ պետք է ծառայի տեղեկատվության հասանելիության ապահովմանը:

2. Առաջարկություններ ուղղված հանրային նշանակության կազմակերպություններին

2.1 Թեև հանրային նշանակության կազմակերպությունները «ՏԱ մասին» ՀՀ օրենքով համարվում են տեղեկատվություն տնօրինողներ, սակայն գործնականում դրանք դուրս են մնացել տեղեկատվության ազատության ոլորտից. շատ կազմակերպություններում անգամ չգիտեն տեղեկատվություն տրամադրելու իրենց պարտականության մասին: Եթե հանրային նշանակության այնպիսի կազմակերպություններ, ինչպիսիք հիվանդանոցները կամ դպրոցներն են, երբեմն առնչվում են տեղեկատվության ազատության իրավունքին, ապա պարենային կամ ոչ պարենային ապրանքների առուվաճառքով կամ արտադրությամբ զբաղվող հանրային նշանակության կազմակերպություններում տեղեկատվության ազատության մասին անգամ չեն լսել: Նման կազմակերպություններում մանուկի քարտուղարը կամ հասարակայնության հետ կապերի պատասխանատուն զբաղվում է զուտ գովազդով և լրատվամիջոցներին տրվող հարցազրույցներով: Ուստի, Ինֆորմացիայի ազատության կենտրոնն առաջարկում է հանրային նշանակության կազմակերպությունների ղեկավարներին և սեփականատերերին որպես առաջին քայլ ապահովել կազմակերպության համապատասխան աշխատակիցների գիտելիքների և մասնագիտական պատրաստվածության բարձրացումը տեղեկատվության ազատության ոլորտում:

2.2 Որպես կանոն, հանրային նշանակության կազմակերպությունները չեն ստանում մեծ թվով հարցումներ: Նրանց կողմից ստացվող հնարավոր հարցումների բովանդակությունը սահմանափակված է տվյալ կազմակերպության գործունեության տեսակով: Ուստի, հանրային նշանակության կազմակերպությունը սեփական նախաձեռնությամբ իր գործունեությանն առնչվող ոլորտային տեղեկատվությունը (սննդամթերքի անվտանգություն, առողջապահություն, կրթություն) հրապարակելու դեպքում կապահովի իր կողմից տեղեկատվության ազատության կիրառման բավական բարձր մակարդակ, բացի այդ, հնարավորություն կստանա հարցման դեպքում հղում անել իր հրապարակած տեղեկությանը՝ ազատվելով լրացուցիչ աշխատանք կատարելուց:

3. Առաջարկություններ ուղղված լրատվամիջոցներին, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին և հանրությանը

3.1 Տեղեկատվության ազատության իրավունքի կիրառման պրակտիկան ցույց է տալիս, որ լրատվամիջոցները և հատկապես քաղաքացիները բավական պասիվ են տեղեկատվության ազատության իրենց սահմանադրական իրավունքն իրականացնելու ոլորտում: Այդ մասին է վկայում նաև Ինֆորմացիայի ազատության կենտրոնի՝ ՏԱ դատական պրակտիկան. տեղեկատվության ազատության վերաբերյալ ԻԱԿ-ի նախաձեռնած մոտ 3 տասնյակ դատական գործերից ոչ մեկի հիմքում ընկած չէ քաղաքացու պահանջը այն պարզ պատճառով, որ նման պահանջ չի եղել: Միայն 2 դեպքում է դատական գործը նախաձեռնվել լրատվամիջոցի՝ «Առավոտ» օրաթերթի լրագրող Արամ Ջաքարյանի կողմից ԻԱԿ-ի հետ համատեղ (տես՝ <http://www.foi.am/hy/all-cases/>):

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը լրատվամիջոցներին և անկախ լրագրողներին առաջարկում է օգտագործել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը և տեղեկություն ստանալու իրավունքը որպես գործիք՝ լրագրողական նյութերի համար անհրաժեշտ տեղեկությունները ստանալու համար: Պետական մարմիններին ուղարկված գրավոր հարցումները ցույց են տալիս ՏԱ ոլորտում աշխատելու պաշտոնյայի պատրաստակամությունը և ունեն մեծ ապացուցողական նշանակություն այն դեպքերում, երբ պաշտոնյան կփորձի խուսափել պատասխանից: Մինչդեռ եթե լրագրողը տեղեկությունը ստանում է այլ ճանապարհներով՝ ծանոթի միջոցով կամ օգտագործելով սեփական հեղինակությունը, պաշտոնյայի համար անբարենպաստ նյութի դեպքում պաշտոնյան հեշտությամբ կարող է հերքել, որ լրագրողին որևէ տեղեկություն է տվել: Բացի այդ, եթե լրագրողը չի դիմում գրավոր հարցմամբ, պաշտոնյան կարող է տարբեր պատճառաբանություններով հրաժարվել տվյալ պահին պատասխանելուց կամ անհարկի հետաձգել պատասխանը: Այսպիսով, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը և ըստ օրենքի ներկայացվող ՏԱ հարցումները հզոր գործիք են լրագրողների համար:

3.2 Հաշվի առնելով լրատվամիջոցների՝ կառավարությանը հսկելու, հանրությանը տեղեկատվությամբ ապահովելու գործառնությունները՝ հարկ է նշել, որ անհրաժեշտ է մեր իրականության մեջ ձևավորել իրենց իրավունքներին հետամուտ լրատվամիջոցներ: Նույնը վերաբերում է նաև քաղաքացիներին. շատ քաղաքացիներ, դիմելով պետական մարմիններին և չստանալով իրենց անհրաժեշտ տեղեկությունները, բավարարվում են միայն այդ մասին ծանոթներին պատմելով, այնինչ բողոքարկու-

մը կամ դատական հայցը կարող են դրական արդյունք ապահովել: Ուստի, այս առումով խիստ կարևոր են դառնում տեղեկատվության ազատության ոլորտի դատական գործերը: Անհրաժեշտ է, որ լրատվամիջոցները և քաղաքացիները տեղեկատվության տրամադրումը պաշտոնյաների կողմից ապօրինաբար մերժելու դեպքերում դատարան դիմեն՝ իրենց իրավունքները պաշտպանելու նպատակով:

3.3 Տեղեկատվության ազատության ոլորտում չափազանց կարևոր է հասարակական կազմակերպությունների դերը: Ունենալով շահառուներ և դառնալով իրենց շահառուների իրավունքների պաշտպանները՝ հասարակական կազմակերպությունները կարող են տեղեկատվության ազատության իրավունքն օգտագործել իրենց գործունեությունն իրականացնելու և շահառուների իրավունքների պաշտպանության հարցերում: Ինֆորմացիայի ազատության կենտրոնի շատ գործընկեր հասարակական կազմակերպություններ արդեն ակտիվորեն օգտվում են տեղեկատվության ազատության իրավունքի ընձեռած հնարավորություններից: Եթե ավելանան այն կազմակերպությունները, որոնք ակտիվորեն կիրառում են տեղեկատվության ազատության իրավունքը, մի կողմից նրանց ճնշումը կանդրադառնա պետական մարմինների գործողությունների վրա՝ դրանք դարձնելով առավել թափանցիկ և հրապարակային, մյուս կողմից կնպաստի հասարակության շրջանում այս իրավունքի վերաբերյալ գիտելիքի բարձրացմանը:

ԻԱԿ-ն առաջարկում է, որ հասարակական կազմակերպություններն իրենց իրավասության սահմաններում պարբերաբար իրականացնեն տեղեկատվության ազատության մոնիտորինգ՝ վերհանելով տեղեկատվության ազատության իրավունքի խախտումները, խտրականության դրսևորումները, օրենսդրական բացերը և պատասխանատվության կանչելով իրավախախտ պաշտոնյաներին:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. Մոնիտորինգում ընդգրկված տեղեկություն տնօրինող մարմինների ցանկը

Պետական կառավարման մարմիններ

1. ՀՀ Ազգային ժողով,
2. ՀՀ Ոստիկանություն,
3. ՀՀ Պետական եկամուտների կոմիտե,
4. Աշխատանքի պետական տեսչություն,
5. Սննդամթերքի անվտանգության և անասնաբուժական պետական տեսչություն,
6. Կրթության և գիտության նախարարություն,
7. Առողջապահության նախարարություն,
8. Բնապահպանության նախարարություն,
9. Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն,
10. Արդարադատության նախարարություն:

Մարզպետարաններ

1. Արարատ,
2. Արմավիր,
3. Արագածոտն,
4. Գեղարքունիք,
5. Լոռի,
6. Կոտայք,
7. Շիրակ,
8. Սյունիք,
9. Վայոց Ձոր,
10. Տավուշ:

Քաղաքապետարաններ

1. ք. Արտաշատ,
2. ք. Աշտարակ,
3. ք. Հրազդան,
4. ք. Կապան,
5. ք. Եղեգնաձոր,
6. ք. Արմավիր,
7. ք. Իջևան,
8. ք. Գավառ,
9. ք. Գյումրի
10. ք. Ստեփանավան:

Գյուղապետարաններ

1. գ. Նոր Խարբերդ, Արարատի մարզ,
2. գ. Գարգառ, Լոռու մարզ,
3. գ. Օշական, Արագածոտնի մարզ,
4. գ. Վերին Պտղնի, Կոտայքի մարզ,
5. գ. Ծավ, Սյունիքի մարզ,
6. գ. Ելփին, Վայոց Ձորի մարզ,
7. գ. Լենուղի, Արմավիրի մարզ,
8. գ. Այգեձոր, Տավուշի մարզ,
9. գ. Լճաշեն, Գեղարքունիքի մարզ,
10. գ. Ազատան, Շիրակի մարզ:

Հանրային նշանակության կազմակերպություններ

1. «Նորք Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ,
2. «Նաիրի» բժշկական կենտրոն ՓԲԸ,
3. «Կլինիկական հիվանդանոց» ՓԲԸ,
4. «Թիվ 15 պոլիկլինիկա» ՓԲԸ,
5. «Հատուկ պոլիկլինիկա» ՓԲԸ,
6. «ՀայՌուսԳազԱրտ» ՓԲԸ,
7. «ՀայՋրմուղ Կոյուղի» ՓԲԸ,
8. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ,
9. «Արմենիատելեֆոն կոմպանի» (ԱրմենՏել) ՓԲԸ,
10. «Քեթրին Գրուպ» ՍՊԸ:

Հավելված 2. Մոնիտորինգի ընթացքում ուղարկված հարցերն ըստ տեսակների

Պարզ հարցերով դիմողները խնդրել են.

- տրամադրել տեղեկություններ ստանալու հարցումների վերաբերյալ վիճակագրական տվյալներ,
- տրամադրել գյուղական և քաղաքային համայնքների ավագանիների նիստերի արձանագրությունների պատճենները,
- հայտնել, թե որտե՞ղ և ի՞նչ կարգով են հրապարակվել տեղեկատվություն տնօրինողի բյուջեն և դրա կատարման հաշվետվությունը,
- տրամադրել տեղեկություններ տեղեկատվություն տնօրինողի կողմից իրականացվող ծառայությունների և ծառայությունների մատուցման գների վերաբերյալ,
- տրամադրել տեղեկություններ աշխատանքի ընդունման կարգի և թափուր աշխատատեղերի վերաբերյալ,
- տրամադրել տեղեկություններ պետական կառավարման մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների հանրային քննարկումների վերաբերյալ:

Բարդ/զգայուն հարցերով դիմողները խնդրել են.

- տրամադրել տեղեկություններ տեղեկատվություն տնօրինողի աշխատակիցների ստացած պարգևատրումների (նվերների, պարգևավճարների) վերաբերյալ,
- տրամադրել տեղեկություններ տեղեկատվություն տնօրինողի տնօրինության տակ գտնվող շինությունների վերանորոգման և շինարարական աշխատանքների վերաբերյալ,
- տրամադրել բնապահպանության, կրթության, առողջապահության, հարկային, աշխատանքի ոլորտներին վերաբերող տեղեկություններ,
- տրամադրել տեղեկություններ տեղեկատվություն տնօրինող մարմնի գերատեսչության շենքի՝ հաշմանդամների կարիքների համար հարմարվածության վերաբերյալ,
- տրամադրել տեղեկություններ տեղեկատվություն տնօրինող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողական ավտոմեքենաների վերաբերյալ,
- տրամադրել տեղեկություններ հանրային նշանակության կազմակերպությունների բարեգործական գործունեության վերաբերյալ,
- տրամադրել տեղեկություններ տեղեկատվություն տնօրինող մարմնի դեմ տեղի ունեցած դատական գործերի վերաբերյալ: